

## ԵՐԿՈՒ ԱՄԻՍ ԱՎՈՒԾՆԻՑ ԵՒ ՍԻՒՆԵՍՑ ԾՃԽԾԲՀՆԵՐՈՒՄ

Ա.

Հրաժեշտ թիֆլիսին:—Անվճար ճանապարհաթուղթ:—Կոռ  
շինուած խճուղին եւ ձիաների խելքը:—Ղարաջիների թարուն:—Գո-  
մէշների, եղների եւ կովերի վիճակը:—Թարաբամաների ձմերոյնե-  
ըք:—Հայերի խելքը:—Ղաղախը, Շամշադինը եւ Շամքօրը:—  
Գանձակը հեռուցից:

1881 թ. Յուլիսի 25-ին թողի Թիֆլիսը: Ճանա-  
պարհի սալլակը, որ բերել էին ինձ համար փոստի կայա-  
րանից, այնքան նեղ, այնքան փոքրիկ էր, որ կարծես  
ձուի պէս կիսած կեճեփից էր շինուած: Ասում են, կա-  
պալառուները ալդ վարպետութիւնը բանեցնում են,  
որ ճանապարհորդները շատ ծանրութիւններ չը կարո-  
ղանան վեր առնել իրանց հետ: Ճշմարիտն ասած, թէ  
իմ և թէ ընկերիս ծանրութիւնները մեծ չէին, նա ու-  
նէր մի թեթև մաֆրազ, իսկ ես մի փոքրիկ չէմոդան:  
Մաֆրազը գրեցինք մեր տակին, իսկ չէմոդանը մեր ու-  
ների առաջ: Նստեցինք. սալլակը շարժուեցաւ: Յետու  
ես իմ կողմից, ընկերս իւր կողմից, սկսեցինք միմեանց  
քաղաքավարութեամբ հարցնել. «Ճեր տեղը բնչպէս է,  
հանգիստ էք»: Բայց մեզանից ոչ մէկը չէր ուզում սկըզ-  
բում խոստովանուել, որ նստած է համարեա մի փը-

շի վրայ, մի փոքր անզգուշ շարժում, — ահա կը գլուխուի ցած... Վերջը ընկերս ասաց ինձ. «Երբ ալդ փոստայի կապութառուները իրանց զեղծումների համար կըդատապարտուէին տաժանակիր աշխատանքի աքսորուել, ես եթէ գատաւոր լինէի, կը վճռէի նրանց նստացնել իրանց շինել տուած սալլակների վրայ և մի քանի տարի ման ածել խճուղու (շօսէի) ճանապարհով»...

Սալահլուկի փոստայի կայարանում պատահեց մեղականատես լինել մի սկանդալի: Դրան առջև ինքնաբաւական վեհութեամբ կանգնած էր կայարանի հսկողը (смотритель). նրա մօտ կանգնած էին մի քանի քած շներւ (Քած շներ կարելի է տեսնել ամեն կայարաններում. նրանք հսկողների (смотритель-нերի) անբաժան ընկերուհիներն են, գրելու ժամանակ պտըտում են նրագրասեղանի շուրջը, քնելու ժամանակ պառկած են նրա մահճակալի մօտ, իսկ դուրս գալու ժամանակ նրանից չեն հեռանում:) Հսկողի առջև, վզները ծուած, կանգնել էին երկու պարսկաստանցի ասորիներ: Դրանց կէսը թուրքերէն, կէսը հայերէն, կէսը ռուսերէն ասում էին. «Աստուած է վկայ մենք տուել ենք... մեզա՞ից առել են փողը... մեզ ասեցին, որ ձեզանից փող է, չի պահանջուի»...

Մօտրիտէլը երեւմն հռհօռում էր խեղճ ճանապարհուների միամտութեան վրայ, երեւմն բարկանում էր, երբեմն հայհոյում էր, վերջապէս բարեհաճեց ասել, — «Ձեզ խարել են»...

Բանից ինչ դուրս եկաւ: Երկու ասորիները Թիֆլիսում գնում են ճանապարհութեան (առօրոյնա) առնելու: Գանձապահութեան (казначейство) արտիստ-գրադրներից մէկը, նկատելով, որ դրանք անփորձ մարդիկ են, լանձն է առնում նրանց ճանապարհութեան տալու ի հարկէ գանձարանից առնելով: Նա ստանում է ա-

սորիներից, սկսեալ թիֆլիսից մինչև Կարս, ամբողջ ճանապարհավճարը (պրագոն), հաւատացնելով նրանց, թէ այլ ևս նրանցից փող չի պահանջուի, ամեն տեղ ձիաներ կը տան, և ալդ թղթով կարող են ցանկացած քաղաքը գնալ, առանց մի կոպէկ վճարելու:

Ասորիները գժուարանում էին հաւատալ, որ գրագերը կարող էր ալսպէս խարել նրանց: Երբ նրանց հասկացրին, թէ իւրաքանչիւր կայարանում պէտք է նորից փող վճարեն ձիաներ ստանալու համար, նրանք ստիպուեցան ոտքով վերադառնալ թիֆլիս և որոնել իրանց կողոպառող արտիստին:

Ասորիների վիճակը մեզ այնքան չէր հետաքրքրում, որքան մեր սեպհական գրութիւնը: Սալահլուի կայարանում մտածեցինք մի կերպ անել, որ գոնէ ալս անգամ կարողանանք փոքր ինչ հանդիսան նստել սալլակի վրայ: Ընկերիս մաֆրաշը էլի առաջուալ նման գրեցինք մեր տակին, իսկ իմ չէմօդանը կապել տուինք սալլակի ետեր:

Կարծես, բախտը վճռել էր գեռ ևս երկար հալածել մեզ: Կէս ճանապարհին յետ եմ նայում, տեսնում եմ, որ չէմօդանը չը կալ: Սալլավարը այնքան վատ էր կապել, որ ճանապարհին ցած էր ընկել: Անպիտանը իր մեղքը քաւելու համար իսկոյն բաց արեց ձիաներից մէկը, նստեց և վազեցրուց, որ գտնէ չէմօդանը: Ալդ միջոցին իմ գլխում ծագեց մի միաք. եթէ ալդ աւազակը չէմօդանը կը գտնէ, մի փոսի մէջ կը ծածկէ, յետոյ կը վերադառնալ ինձ լուր կը բերէ, թէ չը գտալ, անցորդները տարել են,—ես ինչ կարող եմ ասել նրան: Ալդ ենթադրութիւնը շատ հաւանական էր, թէև սալլապանը իմ չէմօդանը գողանալով, շատ խէր չէր տանի. նրա մէջ կալին՝ Զալալեանցի ճանապարհորդութիւնը, Թաղիտթեանցի ճանապարհորդութիւնը, Կաղանկա-

տուացու Աղուանից պատմութիւնը, Օրբելեանի Սիւ-նեացպատմութիւնը, Խնջիջեանի հնախօսութիւնները, հին Հայաստանի քարտէսը, մի քանի կտոր ուրիշ քարտէս-ներ նոր Հայաստանի մասին, «Մշակի» վերջին համար-ները, որ Թիֆլիսում ժամանակ չէի ունեցել կարդալու, թուղթ, մատիտ, մի խօսքով բոլորը մի սալլավարի հա-մար անպէտք բաներ:

Բայց հէնց որ ձին մի քանի քայլ վազեցրի, ես մոռացայ Խնջիջեանի հնախօսութիւնն էլ, հին Հայաս-տանն էլ, նոր Հայաստանն էլ... ով որ իւր կեանքում գոնէ մի անգամ նստել է տկլոր ձիու վրալ, կը հաս-կանալ իմ դրութիւնը: Աւելցնենք դրան, որ ձին սաս-տիկ նիհար էր, մէջքի ողնաշարը լեռնալին շղթալի նման դուրս էր ցցուած: (Ալդ պէտք է վերաբերել փոս-տայի ստարօստաների առողջապահական հմտութեանը, որ նրանք իրանց խնամակալութեանը լանձնուած ձիա-ներին շատ գարի չեն ուտացնուամ, զգուշանալով, մի գուցէ նրանց ստամոքսը փչացնեն): Ինչ էլ որ լինի, իմ դրութիւնը անտանելի էր: Ես նստած էի, ինչպէս որ ասեցի, ձիու տկլոր մէջքի վրայ: Հէնց որ նա տրտնկում էր, ես այնպէս էի կարծում, որ ողնաշարի սուր, դուրս ցցուած ուկորները իմ նստատեղը կտրատում էին:

Ծիծաղելի բան է, որ մարդ ամենասարսափելի տագնապի մէջ երբեմն փիլիսոփայ է դառնուամ: Ալդ մի-ջոցին մի բան գրաւեց իմ ուշադրութիւնը, ես մոռա-ցայ իմ ցաւը, սկսեցի դրա վրալ մտածել: Զին քշում էի խճուղու վրայով, բայց նա սատանալի նման կանգ-նուամ էր, ճանապարհից գուրս էր գալիս, և աշխատում էր կողքերովը գնալ: Այստեղ ինչ խորամանկութիւն կարող էր լինել: Ցետու իմացալ, որ ձին չէր ցանկա-նուամ իր սմբակները ջարդել խճուղու անհարթ մակե-րեսութիւ վրալ, և աւելի բարւոք էր համարում կողքե-

րովը գնալ, ուր գետինը իր բռին դրութեան մէջ համեմատաբար աւելի փափուկ էր և հաւասար: «Ալդ խելացի անասունը. ասացի ինձ ու ինձ, աւելի լաւ է հասկանում խճուղու անպիտանութիւնը, քան այն բազմաթիւ ոչվիզօրները. որոնք գալիս են, տեսնում են և զեկուցում են տալիս, թէ «ամեն ինչ լաւ է»...

Սալլավարը դժուար չէմօդանը: Եւ հեռուից ինձ տեսնելով, որ արդէն մօտենում եմ, 'ի հարկէ շատ էլ որ ցանկանար, չէր կարող թագցնել նրան. միայն ուրախութեամբ ձայն տուեց. «աղալ, նավօթկան շատ պիտի տաս»...

Զիաները կրկին կապեցին սալլակին, նա շարժուեցաւ:

Սալլավարը իր խե քով պակաս չէր երեսում իր ձիաներից. նա էլ թողնելով խճուղին, քշում էր կողքերի ճանապարհներով, որոնք զանազան ուղղութեամբ երբեմն հեռանում էին, երբեմն մատենում էին խճուղուն: Մերկ գետինը քանդուելով անիւների ծանրութեան տակ, հողը փշրուելով, մանրուելով, փոշիացել էր, և մոքանի թիզ թանձրութեամբ ծածկել էր ճանապարհը: Անիւները խրուելով, ակօսներ բացանելով, անցնում էին, բարձրացնելով ահագին փոշեղէն ամպ, որի մէջ խիստ հեշտութեամբ կարելի էր կուրանալ, իսկ դժուարութեամբ շունչ քաշել:

Ես կարծեցի, թէ սալլավարներին պատուիրած է խճուղու հետ խնայողութեամբ վարուել, նրա վրալով չը քշել, որպէս զի չը մաշուի: Այս պատճառով հարցը սալլավարից: «ինչու չէք քշում խճուղու վրալով»:

— «Այնտեղից, աղալ, մենք քշում ենք միայն անձրեալին օրերում, երբ այստեղ ցեխ է լինում, նա ցոյց տուեց իր գնացած թանձը փոշով ծածկուած ճանապարհը, որի անձրեալին օրերի ցեխը կարելի էր երևակալել, թէ ինչ կլինի:

Ինձ շատ է պատահել տեսնել ասիական գնչուների թարուններ, բայց Կովկասում առաջին անգամ ես տեսալ նրանց։ Մեր մօտով անցաւ դարաշիների մի ամբողջ քարաւան։ Խիստ հետաքրքիր էր նալել բնութեան այդ ազատ զաւակների վրայ. որոց համար ոչ հայրենիք կալ և ոչ տուն։ Քարաւանը շարժւում էր արագ, խառնափնթոր բազմութեամբ, անասունների համարեա ամեն տեսակները կարելի էր գտնել այնտեղ։ Տեսնում ես, բարձած աւանակի խուրջինի մի հակից երեսում է մի նորածին քուրակի գլուխը, որը դեռ շատ թոյլ լինելով, չէր կարողացել հետևել իւր մօրը։ Խուրջինի միւս հակից երեսում են երկու փոքրիկ երեխանների գլուխներ։ Բարձած աւանակը վազում է քարաւանի հետ, տնկարնելում է և երեխանների գլուխները աւանակի շարժուելուց ներդաշնակաբար զարկւում են միմեանց։ Նրանք հանգիստ են, կարծես, ցաւ չեն զգում։ Մինը, երկի, քնած է, գլուխը թեքուած է դէպի ցած և օրօրւում է աւանակի քայլերի հետ։

Կնիկները բաց կուրծքով, մերկ սրունքներով և բոբլիկ ոտներով վազում են քարաւանի հետ։ Դրանք էլ աւտնակների նման բարձած են. մէկը շալակին կապել է իր երեխան, իսկ միւս ծծկերին գրկած ունի։ Տղան այնպէս պինդ կպել է մօր կուրծքին, և ծծում է, կարծես տղրուկ լինի.

Ահա այնտեղ աւանակի բեռան վրայ կապած են մի քանի հաւեր։ Միւս բեռան վրայ բըրզել է մի կապիկ և հեգնական ժպիտը երեսին, նայում է իր շուրջը։

Գլխաւոր մթերքը, որ բարձած է աւանակների վրայ, են պատրաստի կամ անպատրաստ մաղեր, որ այդ ցեղի արհեստագործութեան գլխաւոր արդիւնքն է։ Նըրանք հաւաքում են տներից ձիու ագիներ և նրանցից մաղեր են պատրաստում։

Մեր սալլակը կանգնեցրին մի քանի կնիկներ, ուրոնք մօտեցան զանազան հարցերով։ Այդ կնիկների ձեռքի թաթերի, բազուկների, կուրծքի և երեսի վրայ երևում էին մոլորակապուտ գունով զանազան նկարներ, որ գըոշմուած էին մարմնի կաշու վրայ ( 1 ) և ալդ աւելացնում էր նրանց վայրենի գեղեցկութեան վրայ մի առանձին հրապուրանք։

Մէկը մեկնեց ինձ սև, փալլուն քարածուխից շինած մի բան, ասելով. «գնիլ, պարոն, դա կը բախտաւորէ քեզ»։

Այդ բնչ է, հարցրի ես ընդունելով բախտաւորեցուցիչ առարկան, որը տափակ քառանկիւնի ձև ունէր, և մակերեսովթի վրայ փորուած էին զանազան երեսակայական նշանագրներ։

— Թիվիսման է, պատասխանեց նա խորամանկ ժըպիտով, ուղիղ տչքերիս մէջ նալելով, աւելացրեց։ — Քեզ մի վտանգ է սպառնում. կամենում ես, քեզ համար «Փալ բաց անեմ» (գուշակեմ)։

Մտածելով, որ մի քանի կոպէկներով կարող եմ ազատուել գնչուհու թախանձելուց, քսան կոպէկով ազատուեցայ նորանից։

Մեր սալլակը շարժուեցաւ և տասն րոպէ արագ քշելուց յետոյ հազիւ դուրս եկանք փոշեղէն մառախուղի միջից, որ դարաշիների քարաւանը թողել էր ճանապարհի վրայ։

Կարծես, այդ կողմերում բոլոր ժողովուրդը դեռ չէ դուրս եկել այն նախնական դրութիւնից, որի մէջ գեռ ապրում են դարաշիները։

Ճանապարհի վրայ անդադար տեսնում էի ահազին, Ճանը սալլերի խումբեր, որ ճռնչալով ձգում էին մի

1) Զեռագրում բաց էր թողած։

զուգ գոմէշներ, իսկ նրանց առջև լծած մի զուգ եղներ։ Ծիծաղելի բան է տեսնել վիթխարհ գոմէշին խամուտների մէջ։ Խեղճ անասուն, ինչ աշխատութեան մէջ մէջ ասես նրան չեն գործ ածում։ Նրանով վար են վարում, սայլ են կրում, Գանձակից մինչև Թիֆլիս գինու ահագին տիկեր կրելով, նրա վրայ մինչև անգամ հեծնում են։ Ծանրաշարժ գոմէշին կատարել են տալիս բոլոր ալն գործերը, ինչ որ բնութիւնը տնօրինել է ձիու համար։ Մի և նոյն վրձակին դատապարտուած է և եղը։ Նրան ոչ միալն լծում են, այլ նրա վրայ բեռն են կրում, նրա վրայ նստում են։

Մենք անցնում էինք դատարկ անապատների միջով։ Դէպի աջ մինչև կուր գետի եզերը, դէպի ձախ մինչև...<sup>1)</sup> լեռները, այդ ընդարձակ հարթ տարածութեան վրայ, բացի ճանապարհորդներից, ուրիշ ոչ մի մարդկային արարած չէր երևում։ Կարծես, ժանապատը, քոլերան կամ մի այլ մահաբեր ախտ, միանգամայն մեռցրած լինէր բոլոր շնչաւորներին։ Բայց մեր շուրջը երևում էին մարդու աշխատութեան նշաններ։ Ցորենի, դարու արտերը հնձած էին. խուրձերի տեղերը բլրակների նման ելեւում էին արտերի մէջ։ Խոտը նոյնպէս հնձուած էր. կոլեակի ցանքերը դեռ կանաչ էին, չէին հասել։ Կը նշանակէ այդ կողմերում բնակութիւն կալ, մարդիկ են ապրում։ Բայց որտեղ են նրանք, ինչու չեն երևում։

Ղազախի, Շամշադինի, Շամքօրի ամբողջ վիճակները մինչև Գանձակ այդ տպաւորութիւնն են գործում։ Այդ երեք վիճակների ընդարձակ, արգաւանդգաշտերը, տարուայ երեք եղանակներում,—դարնանը, ամառը և աշունը,—ներկայացնում են կատարեալ դա-

1) Զեռագրում բաց էր թողած։

տարկութիւն։ Թարաքամալ բնակիչները իրանց անասունների հետ գաղթում են դէպի հեռաւոր լեռները, եսլյադ։ Նրանց ձմերանոցները մնում են բոլորովին ամայի։ Ոչ մի շուն, ոչ մի կատու անգամ չէք տեսնի այնտեղ։ Ես հետաքրքրուեցալ մտնել ալդ ձմերոցների (զշլաղ) մէկի մէջ, որ մեր ճանապարհին մօտ էր։ Ալստեղ ու այնտեղ երևում էին գետնափոր խորշեր, որոնց մէջ բնակւում է ալդ թափառաշրջիկ ժողովուրդը, երբ ձիւնը պատում է երկիրը։ Գազանների որջերը միայն կարող էին դրանց հետ համեմտուել։ Մարդը չի կարող ալսպիսի մթին և խոնաւ խորշերում բնակուել։ Ալնտեղ կարող է բնակուել միայն թարաքաման, որ իր բնաւորութեամբ շատ չէ տարբերում գազաններից։ Զարմանալի է, որ ոուսաց տիրապետութիւնից յետոյ մօտ մէկ դար ոչինչ չը կարողացաւ փոխել ալդ կիսավալընիների կեանքից։

Եթէ ընդունենք այն հիմնական օրէնքը, որ պէտքը, կարիքը և առհասարակ կեանքի պահանջները ժողովուրդների քաղաքակալիքութեան առաջին վարժապետներն են դառնում, — շատ հեշտ կարելի է բացատրել թարաքամանների իրանց հարևան ազգերից յետամնացութեան պատճառները։ Պտղաբեր և արգաւանդ երկիրը նրանցից մեծ աշխատութիւն և մեծ հմտութիւն չէ պահանջում։ Գարնան սկզբներում մի կերպով փորփըրում են հօղը, սերմը ցանում են և այնպէս թողնում, գնում են դէպի սարերը։ Բնութիւնը ինքնայորդոր կերպով բուսցնում է նրանց ցանքը, անձրևը ոռոգում է, արտերը աճում են։ Նրանք կրկին այցելութեան են գալիս իրանց տրտերին այն ժամանակ միայն, երբ հունձքը հասած էր։ Հնձում են, դիզում են, և դէզերը թողնելով դաշտերի մէջ, կրկին գնում են դէպի լեռները։ Վերադառնում են աշնան վերջերում միայն, շատ

անդամ իրանց հունձքի գէզերը գտնում են ձիւնի տակ ծածկուած։ Այն ժամանակ միայն սկսում են կալսել, ծեծել և ցորեանը բաժանել հասկերից։ Երբեմն գէզերը աշնան անձրևներից փթած են լինում, երբեմն մի թշնամի ձեռք, նրանց բոլորովին անպէտ և անպաշտապան գտնելով, կրակ է տալիս և հրդեհում է։

Ամբողջ Ղաղախը, Շամշադինը, Շամքօրը ալդ կեանքով է ապրում։ Ալդ երեք վիճակները, մինը միւսին կից, աարածւում են կուր գետի աջ կողմը և ներկայացնում են ընդարձակ տափարակներ, մինչև Գանձակ հասնելը։ Դաշտերը տեղ-տեղ ծածկուած են թրփերով, տեղ-տեղ ճահիճներով ու ճոխ խոտերով, տեղ-տեղ այրուած, աւազուտ անապատներ են երևում, իսկ շատ տեղերում պարարտ վարելահողեր, որ խիստ արդիւնաւոր հունձք են տալիս։

Ամառնալին տօթը անտանելի է ալդ կողմերում։ Տենդը թագաւորում է ամեն տեղ, գուցէ դա առաջ է գալիս այն բազմաթիւ ճահիճներից, որ կուր գետը կազմում է իր ընթացքում։ Բայց Շամքօրի բրինձի մը-շակութեան գաշտերը լրացնում են այն, ինչ որ պակաս են թողնում ճահիճները։ Շամքօրը իր գերքով շատ նման է Երևանեան նահանգի Շարուրին։ Նրա մօտով հոսում է Երասխը, Շամքօրի մօտով հոսում է կուր գետը։ Շարուրի գաշտերի վրայ Արփայ գետը, բազմաթիւ առուակների բաժանուելով, ոռոգում է բրինձի մշակութիւնները։ Խսկ Շամքօրի գաշտերի վրայ Շամքօրը նոյնպէս բազմաթիւ ճիւղերի բաժանուելով, նոյն սննունդն է տալիս բրինձի գաշտերին։ Թէ այնտեղ և թէ ալստեղ տենդը, մօծակը, զանազան տեսակ թունաւոր մժեղներ թագաւորում են ամբողջ ամառը։ Գուցէ ալդ պարմանները ստեղծեցին ընակիչների համար կենցաղավարութեան այն եղանակը, որ նրանք

տարուալ տաք եղանակներում գաղթում են դէպի հովասուն լեռները և ալդ նպաստում է նրանց առողջութեանը:

Ղազախի, Շամշադինի և Շամքորի վիճակներում՝ Կուր գետի ընթացքին մերձաւոր տափարակների վրայ, ոչ մի հայոց գիւղ ըլ պատահեց ինձ տեսնել: Ալդ տեղերում բնակւում են միայն թարաքամաներ: Հայոց գիւղերը ընկած են դէպի լիշեալ վիճակների լեռնային (?) կողմերը, սարերի ստորոտներում, բարձրաւանդակների վրայ, կամ ձորերի մէջ: Ալդ երեսով պէտք է վերաբերել այն պատմական հանգամանքներին, որ հալերը ժամանակի անխաղաղ դրութիւնից պաշտպանուելու համար ընտրել են աւելի ամուր, անմատչելի տեղեր,— իսկ այժմ նրանց գրացութիւնը աւազակարարու թարաքամաների հետ, նոյնպէս չէր կարող շատ ապահով լինել: Աւազակութիւնը թարաքամաների համար նոյնքան սուրբ բան է, որքան իրանց կրօնի սահմանած նամազը ու դաստամազը...

Մեր ճանապարհի ընթացքում, մինչև Գանձակ, անցանք չորս նշանաւոր գետերից,— Ալգետ, Խրամ, Աղստաֆայ, և Շամքոր: Առաջին երեքը կամուրջներ ունին, իսկ վերջինը՝ Շամքորը կամուրջ չունի<sup>1)</sup>: Ալդ ժամանակից այդ գետը կամուրջ չունի, ըլ նալելով, որ գարնան ժամանակ լորդանում է, ծածկում է իր ափերը և անկարելի է անցնել, թէև միակ անցքը, որ տանում է դէպի Գանձակ, Շուշի, Նուխի (?), Շամախի (?)

<sup>1)</sup> Պարսից ժամանակներից պյտ գետի վրայ շինուած կամուրջի միայն մի ականջն է մացել: Դրանից յետոյ պյտ գետի վրայ մի հոյակապ կամուրջ շինել տուեց շուշեցի Յարութիւն բէկը: Այդ կամուրջը նոյնպէս ողողուեցաւ ջրի սաստակութիւնից, ողջ մացել են նրա երեք կամարները միայն:

և այլ քաղաքներ։ Երեսում է, որ հին ժամանակի մարդիկը գրդուած բարեգործութեան զգացմունքից, աւելի եռանդ ունեին գետերի վրայ կամուրջներ շինելու, քան թէ ալժմեանները, որ նոյնը պիտի անէին հաղորդակցութիւնը գիւրացնելու նպատակով։

Աղստաֆայի կայարանից սկսեալ, դէպի Գանձակ տանող ճանապարհի խճուղին վերջանում է։ Խճուղին ձգուում է դէպի Երեսանի կողմերը։ Թէև խճուղուց մենք մի առանձին բարիք չենք տեսել, այսու ամենայնիւ, խիստ ծանր տպաւորութիւն էր գործում, երբ ընկանք մերկ ճանապարհի վրայ։ Բարեբախտաբար մի քանի օր առաջ շատ անձրւ էր եկել և ճանապարհը պնդացել էր, և կարելի էր առանց առատ փոշի կուլ տալու առաջ գնալ։

Կարաերի կայարանից մինչև Կօշկար գետը, և այստեղից մինչև Գանձակ անցնում էինք մերկ, աւազուտ տափարակների միջով։ Ես անդադար հարցնում էի ընկերիս, «չէ՞ երեսում Գանձակը»։ Վերջապէս նա ցոյց տուեց ինձ մի կանաչազարդ տարածութիւն, որ հեռուից երեսում էր, որպէս մի փոքրիկ օասիս, մերկ անապատների մէջ։ Դա Գանձակն էր, իր գեղեցիկ ալգիներով։

## Բ

Գանձակի առաջին տպաւորութիւնը, փողոցները, տները, շինարիշները։ — «Եւրոպա» հիւրանոցը։ — Զաւադը եւ իւեարասի։ — «Աշխատակիցը դաւառական բազաքում»։ — Մէիդանը, Շահարասի մէշիդը, հին ամրոցը, Զաւադիսի պալատը։ — Վաճառանոցները։ — Կլոււը։ — Գանձակեցիների գլխաւոր արդիւնաբերութիւնը։ — Գանձակի վիճակը նոր շինուաղ երկաթուղու վերաբերութեամբ։

Ի՞նչ տպաւորութիւն կը գործէ մի պարսիկ, իր քօշերով, երկար արխալուղով, շալէ գոտիով, որ գլխին

դրած ունի Նւրոպական շլեապա և մերկ պարանոցի վրայ կապել է մետաքսեալ սև փողպատ.—նոյն տպաւորութիւնը գործեց ինձ վրայ կիսապարսկական Գանձակը։ Նեղ, ծուռումուռ փողոցներից և ոչ մէկը քարած չէր։ Թանձր փոշին, աղբը, ամենտեսակ ապականութիւն ծածկել էր լատակը։ Տներից մէկը, քարից կամ աղիւսից շինած, գուրս էր նայում գէպի փողոցը բացուած լուսամուտներով, իսկ նրա կշտին մի ալլ տուն կաւէ պատերով, ցածրիկ, որ գէպի փողոցը լուսամուտներ չունէր։ Բարձր, հոլակապ տան մօտ, անդադար հանդիպում է կամ մի խրճիթ, կամ քանդուած աւերակներ։ Մէկը փողոցի լարից գուրս է ընկած, միւսը ներս է գնացած։ Ինչ որ գեղեցիկ է, դրանք են գարեւոր, հսկայ շինարիները, որ իրանց զով հովանու տակ պատսպարում են շինուածքները, և թոյլ չեն տալիս նրանց բոլորովին շնչասպառ լինել փոշուց և տօթից։ Զինարիները, որոնցից շատերը մէկ ու կէս սաժէն տրամագիծ ունին, Գանձակի զարդն են. նրանք մնացել են պարսից տիրապետութեան ժամանակներից, և մի բարի բախտով ոչնչացրած չեն եղել։ Այդ շինարիները պահպանում են Գանձակի առողջութիւնը, որ շատ նախանձելի վիճակի մէջ չէ։ Առհասարակ շատ փոքր թուով կարելի է տեսնել աներ, որ պարտէզներ չունենալին։ Գեղեցիկ նոռնենիները, թղենիները և վարսաւոր միմօզաները իրանց մետաքսեալ ծաղիկներով գուրս են նայում բակերի ցածրիկ պատերի ետևից։

Մանելով քաղաքը, պատուիրեցինք սալլավարին, որ մեզ մի լաւ հիւրանոց տանէ։

«Ո՞րն էք կամենում, հարցրեց սալլավարը, —այս տեղ հիւրանոցներ շատ կան՝ «Նւրոպա», «Ամերիկա», «Կաւկազ», «Թիֆլիս» և ալլն։

—Դրանցից որն որ լաւ է, այնտեղ տար, ասեցինք նրան։

— «Եւրոպան», պատասխանեց սալլավարը և քշեց գէպի այն կողմը:

Հասնելով լիշեալ հիւրանոցը, պահանջեցինք մեզ համար մի կացարան։ Մեզ յայտնեցին թէ վերի յարկի սենեակները արժեն օրական 3—2 ըուբլի, իսկ ներքի յարկինները օրական 1 ըուբլի։ Մենք ընտրեցինք վերջիններից մի սենեակ։ Աւելորդ է նկարագրել ալդ կացարանի սարք ու կարգը, միայն այսքանը կասեմ, ինչ որ մենք առնում ենք Եւրոպայից նրան ալլանդակելու և իր փչացած ձեմ մէջ ցոյց տալու համար,—ալդ կացարանը կարող էր ամենաճիշտ ախպարը լինել ալդ տեսակ աղաւաղութեան։

Երկար սպասում էինք, որ սպասաւորներից մէկը յայտնուի և մեզ լուացուելու ջուր տալ, որ փոշին և կեղտը մաքրենք մեր մարմնից։ Մի պատանի արխալուղը հագին կանգնած էր պատշգամբի վրայ։ Վերջապէս հիւրանոցի պահողը հրամայեց նրան, որ կատարէ մեր սպասաւորութիւնը։ — «Թող գնամ շորերս հագնեմ»... ասաց սպասաւորը և անհետացաւ։ Մէկ ժամից յետոյ յայտնուեցաւ նա արդէն շորերը փոխած։ Եւրոպական հիւրանոցի սպասաւորը պէտք է Եւրոպական հագուստով յայտնուի յաճախորդների մօտ, և ալդ մտքով Զաւադը կատարել էր ինչ որ պահանջում է պարտքը և պատշաճը։

Սկզբում պահանջեցինք ջուր լուացուելու համար, յետոյ սամօվար։ Նուիսեցու յատուկ ճարպկութեամբ Զաւադը երկու յանձնարարութիւններն ևս իսկոյն կատարեց։ Սամօվարը սեղանի վրայ գնելուց յետոյ, նա սկսեց իր ձեռքով մաքրել բաժակները, որ թէլ ածէ, ալդ միջոցին իմ ուշագրութիւնը գրաւեց մի բոլորակ վէրք, որ երևում էր նրա աջ ձեռքի թաթի երեսի վրայ։ —Այ տղայ, ալդ ինչ բան է, հարցը նրանից։

— ԻԼ-ԵԱՐԱՍԻ Է, ՄՊԱԼ, պատասխանեց նա և շարունակեց իր գործը:

Ինձ այնքան չը դրդեց զզուանքը, որ մի այսպիսի վիրաւոր ձեռքով մաքրում էր նա բաժակները, որքան այն սարսափը, որ կարող էինք վարակուել։ Սպասաւորի ձեռքի վէրքը տեղական մի վէրք էր, որ ամեն մի դանձակեցի պէտք է անպատճառ ունենալ։ Նա կոչւում է ԻԼ-ԵԱՐԱՍԻ նրա համար, որ մի ամբողջ տարի տևում է մինչև առօղջանալլ՝<sup>1)</sup>:

Բժշկութիւնը ալդպէս է բացատրում, որ այդ վէրքը մի սունկ է, որ լայտնւում է մարմնի մէջ. բայց գանձակեցիք ալսպէս են բացատրում, որ դա առաջ է դալիս չինարիների տերևներից, որոնք թափուելով փողոցներից անցնող վտակների մէջ, փտում են, և այդ ջրերի գործածութիւնից վարակուում է ժողովուրդը։ Օտարաքաղաքացիք ևս բնակուելով Գանձակում, ստանում են նոյն վէրքը։ Մի կամ երկու ամսուալ բնակութիւնը բաւական է վարակուելու համար։ Զաւադը ստացել

<sup>1)</sup>) Թէև բժշկութիւնը դեռ ևս չէ գտել այդ վէրքի դարմանելու դեղը, բայց տեղացի պառաւները այժմ բժշկում են ընդամենը մի ամսուայ մէջ, թէև առաջ մի ամբողջ տարի. Էր տեսումն է նախ յայտնւում է նա որպէս մի ամսուր ուռուցքը կաշու տակ։ Մէնդեղից պատրաստած մի դեղով նախ փաթեցնում են կաշին և բաց են անում թագնուած ուռուցքի բերանը։ Յետոյ միւնոյն դեղը այնքան գործ են ածում, մինչև ուռուցքը ուտեցներով, համսում է արմատին, իսկ արմատն էլ նոյն դեղով ոչնչացնելուց յետոյ, գործ են ածում. մի պյլ դեղ, որ պատրաստած է լինում եղան լեզու կոչուած բոյսից։ Դա բոլորովին մաքրում է վէրքը։ Յետոյ սպեղանիներով փոքր առ փոքր առօղջացնում են վէրքը. նրա փոս ընկած տեղը լցում է առօղջ մսով, բայց դարձեալ թողնում է դրօշմի նման մի հետք իր տեղում, որ սովորաբար լինում է երեսի վեռյ, կամ ձեռքերի վրայ:

էր ալդ վէրքը իւր Գանձակ գալուց երկու տմսից  
լետոյ:

Իսկ որքան հաւանական է, որ դա առաջ է գալիս  
չինարի ծառերից, ալդ պէտք է բացատրէ գիտութիւնը,  
ես ալսքանը կասեմ, որ ուրիշ մի քանի երկրներում ևս  
գոյանում են նոյն օրինակ վէրքեր, որտեղ չինարի ծա-  
ռեր չը կան. օրինակ, Բաղդադում ալդ վէրքը վերաբե-  
րում են արմաւինիներին (խուրմալի) կամ լաճախ ար-  
մաւ ուտելուն:

Թողնելով ալդ գատողութիւնները, ես գարձեալ վե-  
րադառնում եմ գէպի Զաւադը: Զը Նայելով, որ մի վը-  
տանգաւոր սպասաւորի հետ գործ ունէինք, նա ամեն  
տեղ լայտնուում էր: Նա էր ջուր տալիս լուացուելու և  
սեղանատանը կերակուրները պէտք էր նրա ձեռքից  
ընդունել: Նա հիւրանոցի միակ խաս սպասաւորն էր,  
բոլորը նրան ճանաչում էին, և իր կամակատարու-  
թեամբ միշտ պատրաստ էր ամենի պատուէրները կա-  
տարելու:

Ալդ հիւրանոցի մէջ իջևանելու գիշերուայ առաւօ-  
տը զարթնելով, զգում էի բերանիս մէջ սաստիկ դառ-  
նութիւն: Ես կարծում էի, թէ գիշերը ծխելուցն է:  
Ես սովորութիւն ունիմ գիշերը մի քանի անգամ զարթ-  
նելու ծխել: Բայց այն գիշերը, ընդհակառակն, ճանապար-  
հի լոգնածութիւնից այնպէս թմրած էի, որ ամենկին  
չէի զարթնել: Իսկ ալդ Բնչ դառնութիւն էր: Ես դար-  
ձայ իմ ուղեկցին, երբ նկատեցի նա էլ գլուխը վեր-  
բարձրացրեց բարձից:

— Ընկեր բերանդ Բնչ դրութեան մէջ է:

— Սաստիկ դառն է, պատասխանեց նա և մի այն-  
պիսի խոժոռ շարժեց իր սեռուկ դէմքի վրայ, կարծեա-  
լեղի էր կերել և բերանը կծկծում էր:

Իսկոյն հասկացալ, որ Էալստեղ մի բան կալ, որ

Երկուսիս էլ բերանը միւնոյն վիճակին է ենթարկուել:

Կէս ժամից լետոյ մեղ մօտ եկաւ մի պարոն, նրան պատմեցինք մեր բերանների դրութիւնը:

—Այստեղի ջրիցն է, ասաց նա,—զգուշացէք ալսաեղ ջուր խմելուց:

Ալդ ջուրը, որից խմում է Գանձակի մեծ մասը, քահրիզի ջուր է, որ հեռու տեղից բերուելով, գետնի տակով անցնում է թուրքերի թաղից, և տեղ բացում է թուրքերի տների մէջ, թուրքերը ալդ ջրի հետ ինչ օյին ասես խաղում են, ամեն անմաքրութիւն նրա մէջ լուանում են, նրանով նամազ են անում, հաւատացած լինելով, որ ջուրը չի պղծուի: Ալդ հերիք չէ, նա բաւական երկար տարածութեան վրայ անցնում է թուրքերի գերեզմանատան տակով և բերում է իր հետ փտութիւնների լուծուած մտսները: Խմելու միջոցին մարդ զգում է մի տեսակ թանձրութիւն, և մի տեսակ մածուցիկ տպաւորութիւն է գործում բերանի մէջ, կարծես, մածուն լինի: Այստեղից հասկանալի է այն հիւանդութիւնները, որոնց անընդհատ ենթարկում են գանձակեցիք, մանաւանդ ամառուայ ժամանակ: Ալդ քաղաքում փոքր ի շատէ տանելի է գետի ջուրը, բայց ամառը գետը բոլորովին ցամաքած է լինում, և գրտնուած ջուրն էլ վերևից զանազան առուակներով վեր են առնում ցանքերը կամ ալգիները ջրելու համար:

Գետի ջրին գալով, ես չեմ կարող մի քանի խօսք չասել ալդ մասին: Գանձակում երեք օր մնալով, ես անդադար լսում էի գանգատներ, կոփւներ, գժգոհութիւններ ջրի պակասութեան մասին: Գանձակը շինուած է նոյն անունով գետի վրայ, որ քաղաքը երկու մասն է բաժանում. մի մասնում բնակում են հայերը, միւսում թուրքերը: Գարնան սկզբում գետը սաստիկ լոր-

գանում է և ծածկում է իր եղերքը, իսկ ամառը այնտեղ մի կաթիլ ջուր չէ կարելի տեսնել, գետը ցամաքում է։ Եղած ջուրը, ինչպէս վերևում ասացի, զանազան առուակներով վեր են առնում ալդիները և ցանքերը ջրելու համար։ Այդ ջուրը այնքան անբաւական է, որ համարեա ամեն օր կոխներ են լինում նրա բաշխման համար։ Գանձակեցիք հաւատացնում էին, որ ջուրը առաջ խիստ շատ էր լինում. իսկ ալժմ «մարդկանց մեղքի համար» սակաւացել է։

Գանձակի գետի ջրի սակաւանալը ուրիշ պատճառի չէ կարելի վերաբերել, բացի նրանից, որ անտառները սաստիկ անխնալ կերպով ոչնչացնում են։ Այն լեռները, որոնց մէջ գտնվում են գետի աղբիւրները, առաջ պատած են եղել խիտ անտառներով, իսկ ալժմ կամ բոլորովին մերկացել են, կամ մեծ ծառերի փխարէն թփեր են տեսնւում։

Զրի հարցը Գանձակի կեանքի հարցն է. եթէ ալդմասին պէտք եղած հոգածութիւններ չը կատարուեն (որոնց մէջ գլխաւոր տեղը պէտք է բռնէ անտառների պահպանութիւնը) ալդ քաղաքը մի ժամանակ սովամահ կլինի։

Գանձակի գլխաւոր արդիւնաբերութիւնն է խաղողը և գինին, որ մեծ քանակութեամբ արդիւնահանւում է, տարօւելով գլխաւորապէս Թիֆլիս։ Նատ փոքրէ այն գանձակեցիների թիւը, որ մի, երկու կամ երեք ալդի չունենար։ Տէրերից ամեն մէկը իւրաքանչիւր տարի մի քանի հազար բուբլու գինի է վաճառում։ Ի՞նչ կլինի ժողովրդի վիճակը, եթէ արդիւնքների ալդ աղբիւրը ցամաքի։ Դինի պատրաստում են հալերը միայն, մահմեդականներին, որովհետև կրօնքով մեղք է համարւում Աստուծոյ պարգևած բարիքներից մէկը, խաղողը, պղծել և նրանից գինի պատրաստել, ալդ սնա-

Հաւատութիւնից <sup>1)</sup> գրդուած, իրանք գինի չեն պատրաստում և իրանց խաղողը վաճառում են հայերին, կամ իրանց ալգիները նրանց վարձով են տալիս:

Գանձակի միւս արդիւնահանութիւնն է ալիւրը: Ալդ արդիւնահանութեանը շատ նպաստում է պ. Հախվերգեանի շոգեշարժ աղօրիքը: Պարոնի մարդիկը գընում են մեծ քանակութեամբ ցորեան, և աղալով ուղարկում են Թիֆլիս, կամ ուրիշ տեղեր: Ալդ, ի հարկէ, շատ օգնում է շրջակայ գիւղացիներին, որոնց ձեռքումն է ցորենի արդիւնաբերութիւնը: Եթէ ալդ աղօրիքը չը լինէր, գիւղացին ստիպուած էր ինքն հասարակ ջրաղացի մէջ աղալ տալ ցորեանը և ալիւրը ուրիշ տեղ տանել: Բայց պ. Հախվերգեանի աղօրիքը հեշտացնում են գիւղացու գործը, որովհետեւ նրան միջոց է տալիս եր բերքը եր տան մէջ վաճառելու առանց օտար երկիր տանելու:

Երբ գանձակեցիք լսեցին, թէ Իազու-Թիֆլիսեան երկաթուղին պիտի անցնի իրանց քաղաքի մօտով, նըրանց ուրախութեանը չափ չկար: Բայց երկում է, որ Գանձակին ևս սահմանուած էր նոյն վիճակը, որին ենթարկուեցաւ Քութայիսը: Երկաթուղու գիծը անցաւ Գանձակից օվերստ հետաւորութեան վրայով: Գանձակեցիք բողոք լայտնեցին, լայտնելով, որ գիծը մօտեցնեն քաղաքին: Նրանց բողոքը մինչև Ս. Պետերբուրգ հասաւ և մնաց անհետեանք:

Բաւական հետաքրքիր բան է լրագրի աշխատակցի լայտնուելը գաւառական փոքրիկ քաղաքում, որպէս էր

<sup>1)</sup> Առաջ մահմեդականները խաղողը գինի շինելու համար հայերին վաճառելը մեղք էին համարում, և չէին վաճառում, բայց սյժմ այդ նախապաշտմունքը համարեա թէ վերացել է:

Գանձակը։ Բոլորը գիտում են, թէ նա որտեղ գնաց, ում հետ տեսնուեցաւ, ինչ խօսեց և այլն։ Ամենից առաջ նրա մօտ ալցելում են տեղալին վարժապետները և քահանաները։ (Դրանց վրայ լրագրութեան մէջ շատ է խօսվում):

Ճշմարիտն ասած, ես մի առանձին ցանկութիւն չունէի մարդկանց հետ ծանօթանալու, միայն աշխատում էի մի քանի նշանաւոր տեղեր տեսնել և շուտով լժողնել քաղաքը, որովհետև ամեն ըոպէ վախենում էի հիւանդանալուց։

Առաւտեան մի քանի ալցելուներից ազատուելով, շտապեցի գուրս գալ հիւրանոցի խեղդուած սենեակից, բազարը տեսնելու համար։ Այստեղ իմ ուշագրութիւնը գրաւեց մէյզանը (հրապարակը)։ Դա մնացել է պարսից տիրապետութեան ժամանակներից, մի քառակուսի, փոքր ինչ երկայնաձև ահագին հրապարակ է, շրջապատած գարեւոր ջինարի ծառերով։ Այդ ծառերը իրանց ընդարձակ ստուերի տակ հովանաւորում են խանութները, որ գտնւում են հրապարակի շուրջը։ Երևում է, ծառերի վերաբերութեամբ պարսիկները թէ լաւ ճաշակ և թէ խնամք են ունեցել։

Այդ հրապարակի մօտն է քաղաքի նշանաւոր մէջից։ Նրա գլխաւոր դրան աջ և ձախ կողմերում բարձրանում են երկու բարձր մինարէթներ։ Բացի դրանցից, դրան երկու կողմում կան երկու սաքուներ, որոնց վըրայ նստած են մօլլաները։ Այդ տեսնելով, ես իսկոյն լիշեցի Պարսկաստանը։ Այդ մօլլաները զանազան գործեր են կատարում։ Նրանք աղօթքի թղթեր են վաճառում, տպուած երկար, ժապաւէնաձև թղթի վրայ, նըրանք կնիքներ են փորում, նրանք անգրագէտ մարդկանց համար նամակներ են գրում իրանց բարեկամներին ուղարկելու համար։ Նրանք մի և նոյն ժամանակ

նօտարիուսներ են, գրում են զանազան տեսակ դաշնագրներ, պարտամուրհակներ և ալլն, չը նալելով, որ քաղաքում պաշտօնական նօտարիուս կալ: Նրանց մօտ վաճառում են ատէր ողորմեաներ», վաճառում են Քարբալալի<sup>1)</sup> սուրբ հողից շինուած փոքրիկ մօհրներ, որոնց վրայ մահմեղականները նամազի ժամանակ խոնարհում են, համբուրում են, երևակալելով, թէ Քարբալալի սուրբ երկիրն են համբուրում, որտեղ թափուել է իրանց իմամների արիւնը: Մի և նոյն մօլլաները վաճառում են զանազան տեսակ գրքեր, կախարդութիւններ են անում և իրանց լաճախորդների համար զանազան թիլիսմանական թղթեր են գրում: Դրանց կըշտին մի քանի երեխաներ, գետնի մէջ փորած փոսիկների մէջ ածուխ էին ածել, մի կարդոնի կտորով հովահարում էին և թարմ սիմինդը էին խորովում վաճառելու համար: Ահա ալդ բոլորը, ինչ որ տեսայ լիշեցին ինձ Պարսկաստանը...

Ես գիմեցի գրան մօլլաներից մէկին, խնդրելով, կարելի՞ է արդեօք մէշիդը տեսնել: Նա զարմացած աչքերով չափեց ինձ ոտքից ցգլուխ, նալեց գլխարկիս, նալեց կապոյտ ակնոցներիս, և ապա բաւական դժգութեամբ պատասխանեց. — կարելի է:

Ես մտածեցի գրավաճառ, կախարդ, նօտարիուս, կնիքներ փորող մօլլալի բերանին փոքր ինչ կւղ քսել, նրան մի քանի ապասի շահ տալ, և հարցը արդեօք ունի՞ ալս և ալն գրքերը: Իմ պահանջածը Ղարաբաղի խանների պատմութիւնն էր, մէկը հեղինակութիւն Միքղալ-Զամալի, միւսը հեղինակութիւն Միքղայ Աղիգօղու-

<sup>1)</sup>) Պարսիկների ուխտատեղի է Բաղդադի մօտ, ուր նահատակուել են իրանց իմամներից մի քանիսը. այս պատճառով այստեղի հողը սուրբ է համարւում:

լի: Այդ աշխատութիւններից և ոչ մէկը չը գտնուեցաւ մօլլալի մօտ, նրա խօսքերից երևաց, որ այդ պատմութիւնները գեռ տպուած չեն, այլ ձեռագիրները գտնուած են հեղինակների ժառանգների մօտ:

Դրնից ներս մտանք մէջիդի բակը, որը քառակուսի ձև ունէր: Զորս կողմում պարսկական ճաշակով շինուած էին փոքրիկ և մեծ խուցեր, որոնց մէջ մոլլաները նստած, բարձր ձայնով զօրան էին կարդում: Խուցերից մի քանիսը յատկացրած էին երեխալոց դպրոցի (մադրասէ) իսկ մի քանիսը չափահասների ուսման համար (թաքիայ): Ես հետաքրքրուեցալ տեսնել երեխաների դպրոցը: Թէև լուլիս ամիսն էր, տօթը խեղդում էր, բայց նրանց չէին արձակել: Մի սենեակում լցուած էին 40—50 ի չափ ամեն հասակի երեխաներ, ճ տարեկանից մինչև 20 տարեկան: Նրանք խառնափնթոր կերպով ծալապատիկ նստել էին միմեանց մօտ, ամեն մինը իր տնից բերած օթոցի վրայ, նայելով ծնողների կարողութեանը, այդ օթոցները ունէին իրանց լաւ կամ վատ յատկութիւնները: Այնտեղ կարելի էր տեսնել մի քրքրուած փսխաթ կտորից սկսեալ մինչև թանկագին խալչալ: Բոլոր աշակերտները, գրքերը իրանց առջև յատակի վրայ գրած, անդադար օրօրուելով, բարձր ձայնով կարդում էին: Երևակալեցէք, թէ ինչ աղմուկ և բարելօն կը լինի, երբ 40—50 աշակերտ միանգամից ձայն է բարձրացնում: Շատերը կարդում էին, շատերը ոչինչ չէին կարդում, միայն բերանները բաց էին անում և շրթունքները շարժում էին: Այդ ընդհանուր աղմուկի մէջ գժուար էր որոշել, թէ որն է կարդացողը և որը չ'կարդացողը:

Վարժապետ—մօլլան նստած էր մի անկիւնում և գիրք էր կաղմում: Նա զբաղուած էր իր գործով:

Աշակերտները դրանից օգուտ քաղելով, երբեմն միմեանց բօթում էին, կմշտում էին, կամ միմեանց մազերից քաշում էին։ Բողոքներ էին բարձրանում։ Մօլլան կանչում էր իր մօտ անհանգստին, իր կշտին դրած ճիպուտը վեր էր առնում, մի քանի զարկ տալիս էր նրա ափերի մէջ, ականջներիցը քաշում էր, յետոյ թող էր տալիս, որ գնալ իր տեղը նստի։ Յետոյ նա կրկին սկսում էր իր կազմարարութիւնը։ Այդ բոլորը կատարւում էր մեր աչքի առջեւ։ Որովհետև սենեակի փէնջրէները բացւում էին գէպի բակը, մենք գրսից նայում էինք։

Պարսկական մանկավարժութեան եղանակները ինձ վաղուց արդէն ծանօթ լինելով, ես չուզեցի երկար նայել այդ տանջանքի և բթամտութեան հիմնարկութեան վրայ, միայն զարմանում էի, որ մօտ մի ամբողջ դար ոռւսաց տիրապետութիւնը ոչինչ չէր փոխել դրանց վաղեմի քաղաքակրթութիւնից։ Դարձեալ մնացել էին միևնոյն յետադէմ, խաւար թուրքերը, ինչ որ էին Զաւադ-խանի ժամանակ։

Ես ինդրեցի ինձ առաջնորդող մօլլալին, որ ցոյց տալ մէշիտը։ Դա մի հսկայ շինուածք էր ընդարձակ բակի կենդրոնում, հովանաւորուած գեղեցիկ չինարիներով։ Մէշիտի գուռը բաց էր։ Մօլլան ակնարկեց, եթէ կամենում էի ներս մտնել, պէտք էր հանել կօշիկները։ Այդ առաջարկութիւնը բաւական գժուար լինելով, ես բաւականացալ միայն դրնից նալել։ Այստեղից ամբողջ ներսը երևում էր։ Արևելեան ճարտարապետութեան այդ հոյակապ գործը, ճշմարիտ որ, հիանալի էր։ Ամբողջ շինուածքը, առանց սիւների, կանգնած էր միայն ահագին կամարների վրայ, որ նրա առաստաղին գմբէթի ձև էին տալիս։ Յատակը ծածկուած էր գորգերով. պատերի ստորին մասները զարդարած էին զանազան նկարներով։ Մի կողմում դրած է բարձր ամբի-

ոնն, որի սանդուղքներով մօլլան բարձրանում է և քարոզ է կարգում։ Ուրիշ ոչինչ չկար այնտեղ, առհասարակ դէպի ամեն կողմ, ուր և նայում էր մարդ, մի տեսակ պարզութիւն, որ հեռու էր քրիստոնէական կամ հեթանոսական տաճարների զարդարանքներից։ Երկու հոգի այնտեղ նօտած դէլլան էին ծխում, մի քանիսն էլ ճաշում էին։ Երեսում էր, որ մահմեդականները Աստուծոյ տան շինուածքին այն սրբազնութիւնը չեն յատկացնում, որպէս ալ կրօնքների հետեղները։

Ես գարձալ դէպի ինձ առաջնորդող մօլլան, հարցնելով, թէ որ թուականից է շինուած ալդ մէջիդը։ Նա ինձ ոչինչ ասել չկարողացաւ, միայն յարտնեց։ որ Նահ-Ապաս մեծի շինածն է։ Որովհետեւ այս կողմերում ամեն մի հոյակապ շինուած ընծայում են Նահապասին, թէև նրանից դարերով առաջ շինուած լինէր, ալդ պատճառով մօլլայի ասածը շատ հաւանական չէ կարելի համարել<sup>1)</sup>։

Մէջիդը տեսնելուց լետով, ես կամենում էի տեսնել Զաւադ-իմանի պալատը, որ վերջինն էր Գանձակի տիրապետող խաներից։ Որովհետեւ քաղաքի դրսումն էր գտնւում, հարկաւոր էր կառքով գնալ։ Քառորդ ժամուալ մէջ ես հասալ այնտեղ։ Պալատի դուռը և գուան կողմի մի քանի շինուածքների աւերակներն էին մնացել միայն։ Կառքով ներս մտանք։ Երեսում էր, որ ալստեղ գտնւում էր խանի ամառնալին ամարաթը։ Որովհետեւ ալստեղ մի ընդարձակ ալդի է եղել, շըջապատի պարիսպների մօտ շարքով անկած ահագին շինարիները

<sup>1)</sup> Շահապասը և Քօրօղին բաւական մեծ անուն են Քթողել այդ կողմերում, վերջինիս ընծայում են բոլոր բերդերի աւերակները, որ գտանւում են զանազան լեռների վրայ։

գեռ մնում էին: Մէջ տեղում կար մի քառանկիւնի լճակ, նորա շուրջը զարդարող մարմարեալ քարերը բոլորը քանդել և տարել էին, ջուրը դեռ մնում էր և անշարժութիւնից կանաչել, պատած էր մամուռով: Այդ գեղեցիկ լճակը, որի լստակաւթեան մէջ ամառնային տօթի ժամանակ լեզանում էին, զովանում էին հարեմները, այժմ մի հոտած ճահիճի էր նմանում: Լճակի երկու կողմում երկում էին երկու բարձր քօշքերի աւերակներ. քարերը, աղիւսները տարել էին, մնացել էր երկու հողակոյտ միայն: Այդ քօշքերից հարեմները նայում էին լճակի հայելու մէջ<sup>1)</sup>: Դուան հանդէպ, այգու միւս ճակատում երկում էին հարեմնանալի տւերակները: Այնտեղ, ուր պահում էին երկը կնիկներից ամենագեղեցիկները, այժմ մողէսներ, օձեր ու չղջիկներ էին բնակում: Հին փառքից, հին վայելչութիւնից ոչինչ չէր մնացել: Այն ինչ տրորուել, ոչնչացելէր լաւիտենական անէծքի և գատապարտութեան տակ: Ո՞րքան հայ աղջիկներ զոհել էին ալստեղ իրանց ողջախոհութիւնը, ո՞րքան հայ կնիկներ վատնել էին այստեղ իրանց պատիւը:

Պատմում են, որ Զաւադ խանին լալտնեցին մի գեղեցիկ աղջկալ մասին, որ նոր էին պսակում և հարսանիքի հանգեսը դեռ չէր վերջացել: Նա ուղարկում է իր նօքարներին աղջկալ ծնողների մօտ, պահանջում է, որ նորապսակ աղջիկը իր փեսայի առագստը մտնելուց առաջ, ուղարկեն իր մօտ: Ծնողները երկիւզից կատարում են բռնաւորի կամքը. նորահարսին տանում են

<sup>1)</sup> Այգու տեղում, ուր մշակում էին ծաղիկների ամենագեղեցիկները, այժմ բոլորովին անապատ էր: Երբեմն ռուս սարդաթները վարում են հողը կաղամբ, ծխախոտ կամ կարտոֆիլ են ցանում:

խանի ամարաթը: Խանը տեսնելով գեղեցկուհուն, կամենում է նրա հետ փոքր ինչ սիրախօսութիւններ անել: Բայց նորահարսը, գլուխը դէպի ցած խոնարհած, մնում է լուռ կանգնած նրա առջև, և բերանը չէ բաց անում: «Դէպի վեր նայիր, ասում է խանը, տես, ով է քեզ մօտ կանգնած»: Նորահարսը զգացմունքով պատասխանում է: «Դու Էլ դէպի վեր նայիր, տես, ով է այնտեղ կանգնած... նա ցոյց է տալիս բռնակալին արդարադատ երկինքը և նրա աչքերը լցւում են արտասուքով»:

Ասում են, որ այդ բողոքը այն աստիճան ազգում է խանի սրտին, որ առանց նրան դիպչելու, լետ է ուղարկում ծնողների տունը, և այն օրից երդում է հայ կնիկներ չը բռնաբարել: Առ հասարակ Զաւադիանը բաւական սէր է ունեցել դէպի հայերը, նա յաճախում էր հալոց եկեղեցին և ծննդեան տօնին փող էր ընծայում, որ խաչը իր անունով ջրից հանեն: Մինչև այսօր Գանձակի սուրբ Յովհաննէս եկեղեցու սիւներից մէկի վրայ դեռ մնում է հին արձանագրութիւնը «Փանի սիւն»: - Այդ սիւնի մօտ սովորաբար կանգնում էր խանը, երբ հալոց եկեղեցի էր գալիս: Նրա դէպի հայերը ունեցած համակրութեան գլխաւոր պատճառն այն էր, որ հայերից միշտ հաւատարմութիւն էր տեսել և հալոց մէլիքները միշտ օգնում էին նրան վըտանգի ժամանակ:

Միւս օրուայ առաւօտը ես կամեցալ տեսնել Գանձակի հին բերդը: Այդ բերդը, որ ինն ամիս պահեց իր ամուր պարիսպների տակ ռուսաց զօրքերին, այժմ բոլորովին աւերակ է: Նա բաժանուած է մի քանի մասների: Մի մասնում, զանազան բաժինների մէջ, զինուած էր խանի ամարաթը, կանանոցը, գիւտանատունը, բաղանիքները և կեցութեան ալլ բարմարութիւնները:

Մի մասնում շինուած էին բաղմաթիւ կացարաններ, որոնց մէջ լցնուամ էր քաղաքի կամ շրջակալ գիւղերի ժողովաւրդը պաշտրման ժամանակ։ Ցոյց էին տալիս այն մասը, որ հայերին էր յատկացրած, և այն մասը ուր թուրքերն էին բնակուամ։ Բերդի շրջապարսպի մի քանի մասները և ամուր աշտարակներից մի քանիսը դեռ ողջ են։ Երկաթէ ահազին դռները ես տեսալ թաւալուած հողակոյտերի մէջ։ Պատմում էին, որ այդ բերդը մի քանի տարի առաջ բոլորովին քալքալուած չէր։ Բայց այն օրից, երբ տեղալին կառավարութիւնը սկսեց աճուրդով մաս-մաս վաճառել շինուածքների նիւթը, քաղաքացիք գնելով, սկսեցին քանդել քարերն ու աղիւսները, տարան իրանց համար նոր բնակութիւններ կառուցանելու։

Այդ բերդը ծառայում էր որպէս պատսպարան թէ պարսից խանների, և թէ Գանձակի մելիքների<sup>1)</sup> համար։ Երբ 1790 թուին (?) Նուշուալ Իբրահիմ խանը, վրաց Գիօրդի իշխանը, միացած լեզգիների հետ (??) պաշտրեցին այդ բերդը, նրա աշտարակներից չորսը յանձնուած էր շատ հայ մելիքների պահպանութեանը։ Դրանցից մէկն էր Մէլիք Մէլիքումը, մի քաջ, խորամանկ, մի և նոյն ժամանակ անբարիշտ մարդ։ Մէլիք

<sup>1)</sup> Գանձակի գաւառում Զաւադ-խանի ժամանակ եղիւ են չորս մէլիքներ։ 1. Խաչակապ գիւղի մէլիք Մովսէսը, որը խանի համար զէնքեր էր պատրաստել տալիս (Խաչակապ գիւղի հպերը մինչև պատրաստել առաջ ամենազործներ։ Երկաթը նրանք ստանում են Բանանց գիւղից)։ 2. Ուկանապատ գիւղի մէլիք Խոսուրը, որը մէլիք Շահնազարի որդին էր։ 3. Բարսում գիւղի մէլիք Ռոստամը, որ աիրում էր ամբողջ Շամբորի վրայ և խանի ամենազօրաւոր դաշնակիցներից մէկն էր։ 4. Գետաշէն գիւղի մէլիք Մնացականն էր, Մ. Եղգարի որդին։

Մէջլումը պաշարման ժամանակ նոյն իսկ բերդում գըն-  
դակ ստացաւ մի գաղտնի չարագործից <sup>1)</sup> և վերաւոր  
տարուեցաւ իր վրանը, Զաւադ խանը մի ամբողջ շա-  
բաթ նրա սպանուած մարմինը պահեց, թէ ճաշին և  
թէ ընթրիքին նրա մօտ կերակուրներ էր ուղարկում  
իր խոհանոցից, ցոլց տալու համար, թէ Մէլիք Մէջ-  
լումը դեռ մեռած չէ, որպէս զի զօրքը ալդ քաջի մա-  
հը լսելով չը վհատուի <sup>2)</sup>: Երբ պաշարումը վերջացաւ,  
թշնամուն հեռացրին, Զաւադ-խանը նրա մարմինը թա-  
ղել տուեց Գանձակի ս. Ցովհաննէս մալը եկեղեցու ա-  
ջակողմեան խորանում, Աղուանից ներսէս կաթողիկոսի (?)  
գերեզմանի մօտ, թէև դա հակառակ էր հալ ժողովրդի  
կամքին:

Գանձակի բերդի շինութեան նիւթերը, քար, ա-  
ղիւս և ալն, որպէս վերեսում լիշեցի, աճուրդով վաճա-  
ռում են, իսկ տեղը նոյնպէս վաճառում են բնակիչնե-  
րին նոր շինութիւններ կառուցանելու համար: Այստեղ

<sup>1)</sup> Ասում են, որ չարագործը Զաւադ-խանի եղբայրն  
էր, որ ոխակալութիւն ունէր մէլիքի հետ, որովհետև մէ-  
լիքը կասկած էր յայտնել Զաւադ խանին նրա եղբօր հա-  
ւատարմութեան մասին:

<sup>2)</sup> Մէլիք Մէջլումը թէև իր քաջութեան համար շաա  
սիրուած էր Զաւադ-խանից, բայց նա հայերի մէջ վատ ա-  
նուն է թողել, որովհետև Աղա-Մամատ-խանի և Զաւադ-  
խանի հետ մասնակցեց Թիֆլիսի աւերման արշաւանքին:  
Մինչև այսօր հայերի մէջ մացել է ժողովրդական երդի մի  
կառը, որ այն ժամանակ Թիֆլիսեցիք յօրինեցին նրա համար:

«Մէլիք Մէջլումը շուն դառնայ

«Զաւադ-խանը — պստիկ կուճի,

«Մէլիք Մէջլումի ազգէմէն

«Ել չը մաս մէկը Շուշի:

Մէլիք Մէջլումը մէլիք Հաթամի (?) որդին էր:

շինուած է ռուսաց փոքրիկ եկեղեցի, ամբարներ և ալյն։ Բերդի աւերակները տեսնելուց լետով ես մտալ հասարակաց ալգին, որ շատ հեռու չէ այստեղից։ Բոլոր գաւառական քաղաքներում, որքան պատահել է ինձ տեսնել հասարակաց ալգիներ, Գանձակինը կարելի է ամենագեղեցիկը համարել։ Այդ ալգին տնկուած է Վարանցօվի փոխարքալութեան ժամանակներից և խիստ խնամքով պահպանուած է։ Այնտեղ կարելի է տեսնել, ոկսեալ հնդկական մագնօլիալից մինչև տեղական ամենալավագութիւնը մինչև տեղական ամենալավագութիւնը տունկերը։ Միակ գեղեցիկ բանը, որ գրաւեց Գանձակում իմ ուշադրութիւնը, — այդ ալգին էր, Պէտք է ասած, որ գանձակեցիք առհասարակ ալգեգործութեան մէջ շատ առաջ են գնացել։ Նրանց խաղողը իր ընտիր լատկութիւններով ծանօթ է և թիֆլիսեցիներին։

Գանձակի մէջ մի այլ նշանաւոր բան չը լինելով տեսնելու համար, ես շտապում էի գուրս գալ։ Հայոց գպրոցները ես չը գնացի, մանաւանդ ամառն էր, աշակերտները արձակուած էին։ Բացի գրանից այնքան գըրուել է հայոց գպրոցների մասին, որ կարդացողների զահլէն տարել են։ Մնում էր ինձ տեսնել մի շարքառի գործարան, որտեղ մետաքսից զանազան տեսակ գործուածներ են պատրաստում։ Այդ գործարանը թէև եւրոպական կատարելագործուած մեքենաներ չունէր, թէև մեքենաները բոլորը պարսկական հին ձևն ունէին, ալսուամենալիւ պատրաստուած կերպասները թէ իրանց տոկունութեամբ և թէ գոյների գեղեցկութեամբ հիանալի էին։ Այստեղ պատրաստուած էին՝ դարալի, ղանաւուզ, կանանց գլխի չէրդաթներ և այլ զանազան տեսակ մետաքսեղէն գործուածներ, որ բաւական ծախւում են տեղացիների մէջ։

Նոյն աւուր գիշերը ես գնացի կլուբ։ Նրա բաւական մեծ շինուածքը պատկանում է մի գերմանացու

Ելենդօրֆի կալօնեաից, որը Գանձակից շատ հեռու չէ.  
Կլուքի շինուածքը գտնուում է քաղաքի կամրջի մօտ  
որ շրնուած է Գանձակի կամուրջի վրայ: Կլուքում  
ես բազմութիւն չը գտալ, մի քանի ծառալողներ նըս-  
տած թուղթ էին խաղում: Կլուքի դատարկութիւնը  
այն պատճառով չէր, որ շատերը ամարանոց էին գը-  
նացել, ինձ ասում էին, որ լաճախորդների թիւը միշտ  
փոքր է լինում, այնտեղ գնում են միայն ուսւա ծա-  
ռալողները, տեղացի վաճառական կամ արհեստաւոր դա-  
սը ոտք չէ կոխում այնտեղ, իսկ հայ ծառալողները գը-  
նում են նրանք միայն, որ առանձին սէր ունին թուղթ  
խաղալու: Ալդ ողորմելի հիմնարկութիւնը պահպանում  
է գլխաւորապէս նրանով, որ գիւղացի թուրք բէգերից  
իւրաքանչիւրից 20 ըուբէ առնելով, անդամ են գրել  
տալիս, որոնք քաղաքը տարին մի անգամ ոտք չեն կո-  
խում:

Գանձակի հին քաղաքի տեղը աւելրակ է ալժմ:  
տների փլատակները դեռ երեսում են: Ալստեղ կալ մահ-  
մեղականների մի ուխտատեղի, որ կոչւում է Գօգ-հմամ:  
Դա առաջ պատկանելիս է եղել հայերին, և այնտեղ է  
Խոսրով նահատակի գերեզմանը:

Գանձակում մնացի երեք օր միայն. այնուհետև  
ձի վարձեցի, որ արտօւղի ճանապարհներով կարողանամ  
տեսնել իմ ցանկացած տեղերը:

Գ.

Քարտէսով ճանապարհորդութիւն:—Ելէնդորֆ:—Հայիքէնդ կամ  
Հայիշչէն:—Սիւլուկ գիւղ:—Գետաշէն:—Ղարաբուլազ:—Թօդամ  
դիւզ:—Երբէջ:—Ղորաչին ար:—Աղջակուլոյ:—Մէլիք-Բէդլարով-  
Ների կալուածքները:

Ես Թիֆլիսից դուրս գալու ժամանակ վեր էի ա-  
ռել ինձ հետ Թիֆլիսի գլխաւոր շտաբի պատրաստած  
Անդրկովկասի հինգ վերստանոց քարտէսները: Երբ կա-  
մենում էի Գանձակը թողնել, Ելիսաւէտօպօլի գաւառի  
քարտէսը դրի առջևս, կամենում էի մի մարզուտ  
պատրաստել, որ նրա համեմատ սկսէի ճանապար-  
հորդութիւնս: Նայում եմ, նայում եմ, իմ ցանկացած  
տեղերից և ոչ մէկը նշանակուած է քարտէսի մէջ:  
Տէր Աստուած, մտածում եմ, ալդ Բնչ բան է. թուր-  
քերի ամենաաննշան ձմերոցները, որոնց մէջ տարուալ  
երեք ամիսը միայն բնակութիւն է լինում, նշանակուած  
են քարտէսի մէջ. բայց հայոց գիւղեր չկան: Բարեբախ-  
տարար ինձ մօտ էր մի գանձակեցի պարոն, որին ես  
դարձար, խնդրելով, որ բացատրէ ալդ գաղտնիքը: Նա  
նոյնպէս նայեց քարտէսի վրալ ոչինչ չը կարողացաւ  
ջոկել:

—Ո՞ր գիւղն էք ուզում, հարցըեց նա:

—Օրինակ, ես ուզում եմ տեսնել Գետաշէն գիւղը:  
Նա որոնեց քարտէսի վրալ, և ասաց.

—Ահա ալդ Զալ-քէնդը հայոց Գետաշէնն է:

—Հիմայ հասկացալ, քարտէս պատրաստողները հա-  
յոց անունները թարգմանել են, չալ—թուրքերէն նշա-  
նակում է գետ, իսկ քէնդ նշանակում է գիւղ, և այս-  
պիսով Գետաշէնը դարձրել են Զալ-քէնդ՝ այսինքն գե-  
տի գիւղ:

Ես նկատեցի, որ ոչ միայն հայոց գիւղերը, այլ մինչև անգամ հայոց վանքերը թուրքերէն անօւններով էին նշանակուած։ Ուրեմն առաջ պէտք էր նրանց թուրքերէն անունները սովորել, յետոյ օգուտ քաղել ալդ քարաէսներից, որը մի մեծ գժուարութիւն էր ինձ համար։ Բայց ինչ նպատակ կար այսպէս խառնաշփոթ բան շինել անուններից, — ես հոսկանալ չը կարողացայ։

Ես մի կողմ գրեցի քարտէսները, և աւելի քարտոք հոտմարեցի մի հմուտ առաջնորդ ինձ հետ վեր առնել, քան թէ թուրքերէն անուններ սերտել։

Մի ամբողջ ժամ տեսեց մինչև ես գուրս եկայ Գանձակի ալգիներից և բռնեցի այն ճանապարհը, որ տանում էր դէպի գերմանական Ելինգորֆ կոչուած կօլօնիան։ Ցանկանում էի տեսնել, թէ ինչպէս է ապրում եւրոպացի գաղթականը Հայաստանում։

Թիֆլիսի գերմանական կօլօնիան իր մաքրութեամբ և գեղեցկութեամբ ամենին հիացք էր պատճառում։ Բայց պէտք է ասած, որ Թիֆլիսի կօլօնիան այժմ իսկապէս քաղաքի մի մասն է կազմում։ նա կորցրել է իր կօլօնիայի յատուկ բնաւորութիւնը։ Բայց Ելինգորֆը կալօնիայի կատարեալ կերպարանք է կրում։ այստեղ կարելի է տեսնել մի քաղաքակիրթ ժողովրդի տնտեսութիւնը։ Փողոցները լայն, ընդարձակ և ուղիղ են։ աջ և ձախ կողմից զարդարած են բարդի և չինարի ծառերով, որոնք հովանաւորում են տների շարքը։ Փողոցների երկու կողմից ևս, տների դռան առջևից ջրի վրակներ են վազում։ Բոլոր տները միակերպ են, արխիտեկտուրալով չեն զանազանութեամ միմեանցից, բայց բաւական պարզ, մաքուր, և համեստ ճաշակով շինուած, պատուհանները նայում են դէպի փողոցը, որոց միջում կարելի է տեսնել զանազան տեսակ ծաղիկների բազարներ։ Տների ետևի կողմումն է ընդարձակ բակը, ամ-

բարները, ախոռատունը և մի կանոնաւոր տնտեսութեան համար հարկաւոր եղած այլ շինուածքները<sup>1)</sup>: Միւնոյն տների շարքում դուք կը տեսնէք կօպէկների ետևից ընկած հայ մանրավաճառի խանութը, որը յալտնի չէ որ ջհանդամից եկած, այստեղ ամբողջ օրը երգումներ է ուտում, ստախօսում է, որ կարողանայ մի առարկայ իր արժէքից կրկնապատիկ գնով վաճառել: Ինչ համեմատութիւն կայ ալդ խարեբալի և այն հասարակութեան մէջ, որ գործ ունի բնութեան հետ, որ իր արդար վաստակը ստանում է աշխատանքով ու քրտինքով:

Այս կողմերում չը կալ մի ուրիշ աշխատասէր ժողովուրդ որպէս Ելենդօրֆի գերմանացիները: Կինը այստեղ ամեն գործում օգնում է տղամարդին: Նա հունձք է հնձում, խոտ է հնձում, կալ է կասում, նայում է անասուններին: Քաղցր է նայել կնոջ վրայ, յարդեալ գդակը գլխին, մի կարճ գերեալ հագած, թեթև բաշմակները ոտին, հնձում է: Աղյիկները, տղաները նոյնպէս ամենայն եռանդով մասնակցում են ծնողների եռանդու աշխատութեանը:

Ելենդօրֆի գաղթականները շուարներ են, եկան ալդ կողմերը բոլորովին մերկ և աղքատ: Մի ամբողջ տարի Գանձակի հայերը կերակրեցին նրանց, մինչև կառավարութիւնից տեղ ստացան իրանց համար բնակութիւն հաստատելու: Նրանք եկան կարծեմ 1828 թուին, և երեք տարի առաջ կատարեցին իրանց լիսուն ամեալ յօթելեանը: Կէս գարի ընթացքում նրանք կարողացան հարստանալ և իրանց համար կանոնաւոր տնտեսութիւն

<sup>1)</sup>) Այդ շէնքերը այնքան ընդարձակ են, որ տան տէրերից շատերը նրանց մի մասը վարձով են տալիս զանազան օֆեցերների և ծառայողների, որոնք ամառը անց են կացնում այնտեղ:

ստեղծել: Կառավարութիւնը շնորհել էր նրանց այնպիսի արտօնութիւններ, որ կէս դարը բաւական էր ալդ աշխատասէր ժողովրդին իր գրութիւնը ապահովելու համար: Նրանք ստացան ամենապատուական հողեր, այնքան, որքան ցանկանում էին: Գանձակի ջրի եօթը մասից վեցը տուեցին քաղաքի ամբողջ ժողովրդին իրանց ալգիները և ցանքերը ոռոգելու համար, իսկ մի մասը ստացան Ելենդորֆի գաղթականները: Ցիսունտարի ազատ էին հարկերից և ամեն տեսակ տուրքերից՝ ունէին իրանց առանձին ինքնավարութիւնը, իրանց մէջ եղած բոլոր վէճերը քննվում էին և վճռուում էին իրանցից ընտրուած շուլցի ձեռքով: Տեղալին իշխանութիւնը իրաւունք չունէր շուլցի ընտրութեան կամ նրան փոխելու մէջ<sup>1)</sup>:

Ալդ բոլոր դիւրութիւնները կարող էին մի այլ հասարակութեան ծուլացնել, փչացնել, բայց նրանց միջոց տուեցին ինքնուրոյն կերպով դարգանալու և կանոնաւոր, բնական ճանապարհով լառաջադիմելու: Ալժմ նրանցից իւրաքանչիւրը ունի մի քանի ալգիներ, ընդարձակ վարելահողեր, խոտ հնձելու մարգագետիններ, այլ և աշխատում են գնել ալգիներ Գանձակում, երբ աճուրդով վաճառուում են, կամ աղքատութիւնից ծախւում են:

Իւրաքանչիւր գերմանացի ամեն տարի վաճառում է մի քանի հազար ըուբլու գինի և այլ բերքեր:

Ելենդորֆի գաղթականները ունին մի գեղեցիկ եկեղեցի կարմրագոյն քարերից շինուած. նրա մօտ է

<sup>1)</sup> Գանձակի հաշտարար դատարանում կամ նահանգական դատարանում մի երկու կամ երեք գործեր կան, որ վերաբերում են Ելենդորֆի գերմանացիներին: Նրանք սուբերում ուրիշ գործեր չունին:

դպրոցը, որի մէջ սովորում են երկու սեռի աշակերտները միասին։ Դպրոցի մօտ կայ մի փոքրիկ կօկիկ տուն վարժապետի բնակութեան համար։ դպրոցը ունի ընդարձակ պարտէզ երեխաների խաղալու համար։ Տարէնը երկու անգամ արձակուրդ է լինում մի քանի շաբաթներով, մէկը գարնան սկզբում ցանքի ժամանակ, միւսը ամառը հունձքի ժամանակ։

Ունին խնայողութեան կասսայ, ունին բարեգործական կասսայ աղքատներին օգնելու համար։ Ունին հասարակաց շտեմարան, մի խօսքով, այն բոլոր հիմնարկութիւնները, որ միջոց են տալիս մարդուն ապահով կերպով ապրելու և կարօտութիւնից ազատ մնալու Խնայողութիւնը, չափաւոր և համեստ կեանքը ալդ գաղթականների կենցաղավարութեան հիմնական կանոնն է։ Նրանք իրանց հեռու են պահում ամեն տեսակ շռալութիւնից։ Մինչև վերջին տարիները նրանց կանալքը ծանօթ չէին մետաքսեքէն, կամ բրդեղէն հագուստների հետ, չը նայելով, որ շատ հարուստ էին։ Հասարակ չթեղէն հագուստով կառավարում էին։ Տղամարդիկ նունպէս չէին հագնում մահուդ կամ արիկօ։ Պատմում են, որ նրանցից մէկը Թիֆլիսում գնել էր մի թանկագին մուշտակ։ Խսկոյն կալօնիստները ժողով կազմելով, արգելեցին նրան հագնել, որ իր օրինակով չը գալթակղեցնի միւսներին։ Նա ստիպուեցաւ իր մուշտակը վաճառել։

Ելէնդօրֆի գաղթականները իրանց օրինակով կարող էին լաւ օրինակ տալ Գանձակի հայերին։ Բայց մինչև այսօր հայերը դրանցից սովորեցին երկու բան միայն, այն է՝ Փօրդօն և տակառ շինել։ Գանձակեցի թուրքերի բանեցրած բոլոր Փօրդօնները հայերն են շինում։

Ելէնդօրֆում ես մնացի կէս ժամ միայն։ Այստե-

զից պիտի գնալի Հաջի-քէնդ, որը Գանձակի ծառալող-ների ամարանոցն է։ Ճանապարհը հարթած էր, որով-հետև մինչև լիշեալ գիւղը Գանձակից միշտ կառքեր և փոստալի սալլակներ են գնում։ Ելենդօրֆից սկսեալ Գանձակի տափարակը վերջանում է և ճանապարհը բարձրանում է գէպի բլուրների զառիվերը, և լեռների վրայով պտոյտներ գործելով, հասնում է մինչև Հաջի-քէնդ։ Ելենդօրֆից այն կողմը բնութիւնը բալորովին փոխում է։ Կարծես, մարդ մանում է մի ուրիշ աշխարհ։ Հետզհետէ բլուրները ծածկում են թիերով, և ապա սկսում են անտառները։ Ես հագած ունէի բարակ ամառնային հագուստ։ մինչև Ելենդօրֆ հաս-նելս սաստիկ շոքում էի տօժից։ իսկ այժմ սկսեցի մըր-սել և մի և նոյն օրը հարփուխ ստացալ։

Հաջի-քէնդը, ինչպէս ասացի, Գանձակի ամարանոցն է։ այնտեղ է անցկացնում ամառը՝ գաւառապետը իր բոլոր ծառալողներով, այնտեղ են լինում քաղաքի բո-լոր պաշտօնատարները։ Գանձակից մինչև այստեղ ըե-րած է հեռագրական թել։ Հաջի-քէնդը այժմ բացի ա-մարանոց եկողներից ուրիշ բնակիչներ չունի։ Բայց նա առաջ եղել է հայրենակ գիւղ։ մինչև այսօր մնացել է հայոց եկեղեցին, որ կիսով չափ աւերակ է։ Գիւղից ոչ այնքան հեռու, անտառի մէջ երևում է հայոց գերեզ-մանատունը։

Հասնելով Հաջի-շէն, մի փոքը այս կողմ և այն կողմ ման գալով երկու ժամը լրացաւ։ Սաստիկ սովոր էի, մտալ հիւրանոցը մի բան ուտելու։ Հիւրանոցի պա-հողը գերմանացի էր, ով գիտէ որ տեղից եկած։ ահա-գին բարձրահասսակ կինը, նստած պատշպամբի վրա նամակ էր գրում, ամուսին ալրը պտըտում էր հիւ-րերի շուրջը, զանազան հանաքներ էր անում։ Մտալ սեղանատունը։ Նրա շուրջը պատել էին տեղալին բո-

լոր ծառալողները ամեն կոչման և ամեն աստիճանի, սպասում էին, որ ճաշ տան: Երևում էր, որ կերակուր ների ցուցակ չը կար. սպասաւորը ներս մտաւ և բերանացի լալտնեց, թէ ինչ տեսակ կերակուրներ կան, և նրանց թւում լիշեց հալոց քօրանին ու չիխիրթման: Այդ երկու անունները ընդհանուր ծիծաղ բարձրացրին, ուուսները սկսեցին հոհոալ: Նրանց թւում գտնուող մի քանի հալ ծառալողներ ևս սկսեցին ծիծաղել իրանց պապերի բօրանու և չիխիրթմալի վրալ, երբ նկատեցին, որ իրանց ոուս պաշտօնակիցները ծիծաղում են: Բնաւորութեան ցածութիւնը, ստոր հաճոլամոլութիւնը երեւում է առաւելապէս ալսպիսի մանը բաների մէջ: Իմ գրութիւնն էլ ոչ սակաւ ծիծաղելի էր. ազգալին զգացմունքը շարժուեց ինձանում, ես բոլորի հակառակ պահանջեցի չիխիրթմալ և բօրանի: Դուրս եկաւ, որ շատ լաւ էին պատրաստուած:

Ճաշի սեղանի վրալ խօսակցութեան առարկան գուբերնատօրի ջէլրանն էր:

—Դուք տեսաք գուբերնատօրի համար բերած ալին նոր ջէլրանը, հարցնում է մէկը միւսից:

Տեսալ. ինչպէս չէ, շատ զալումն է. պատասխանում է միւսը:

—Երբ մօտենում է մարդուն, սկսում է առջեկ ոտիկներով քանդել գետինը, մէջ է մտնում երրորդը:

—Զէ, առջեկի ոտիկներով չէ քանդում, ետեկի ոտներովն է քանդում և մի և նոյն ժամանակ պոչը շարժում է, մի չորրորդը սկսում է ուղղել նրանց սխալը:

Ամբողջ կէս ժամ տեսեց վիճաբանութիւնը, արդեօք գուբերնատօրի ջէլրանը մարդուն մօտենալու ժամանակ առջեկի ոտներն է շարժում, թէ ետեկի: Ես ձանձրացալ այդ դատարկախօսութիւնից, գուրս եկալ սեղանատնից պատշգամբի վրալ, ալսեղ պահանջեցի կօֆէ:

Դրսից ես լսում էի մի և նոյն վիճաբանութիւնը, բայց  
հարցը դարձեալ մնաց անվճիռ։

Պատշգամբի վրայ նստած ժամանակս հայ ծառա-  
լողներից մէկը մօտենում է ինձ, և առանց իրան ինա-  
նօթացնելու, ուղղակի ասում է։

—Գիտէք ինչ կայ, հիւրանոցի տէրը՝ ալդ տունը  
շինելու ժամանակ, ասում են, գտել է ահագին գանձ,  
հիմա նա շատ հաջուսա է։

—Ես հաւատում եմ, այսպէս թանգ-թանգ որ ծա-  
խում է նա իր կերակուրները, կարող է գտնձ ունե-  
նալ, եղաւ իմ պատասխանը։

—Զէ, փող է գտել, փող, կրկնեց անծանօթը, և  
դարձեալ չէր կարողանում ըմբռնել, որ իր տեղեկու-  
թիւնը միայն առասպել էր և աւելի ոչինչ։

Մինչև Հաջի-շէն ես եկալ միայնակ, որովհետեւ  
ճանապարհը ուղիղ էր և հեռագրական թելի սիւները  
օգնում էին ինձ չմոլորուելու։ Բայց հեռագրական թե-  
լլ Հաջի-շէնում վերջանում էր։ Այստեղից ես պիտի  
գնալի Սիւլուկ կամ Ազատ կոչուած գիւղը։ Ճանապար-  
հը, որ աշնում էր այնտեղ, մի նեղ շաւիղ էր, որ  
պտղաւում էր լեռների վրայով։ Խիստ հեշտութեամբ  
կարող էի մոլորուել, մանաւանդ, որ տեղ-տեղ շաւիղը  
կորչում էր թփերի մէջ։ Իմ բախտից պատահեց մի  
գիւղացի, որ Հաջի-շէնից գնում էր գէպի Սիւլուկ։ Ես  
խնդրեցի, որ առաջնորդէ ինձ, խոստանալով, որ նրան  
արադի փող կը տամ։ Դուրս եկաւ, որ գիւղացին թէւ  
հագուստից աղքատ էր երեսում, բայց բաւական բարե-  
սիրտ և ունեսոր մարդ էր։ Ճանապարհի երկարութիւնը  
ձանձրալի չը լինելու համար, ես սկսեցի նրա հետ հե-  
տեւեալ խօսակցութիւնը։

—Ի՞նչ գործ ունէիք Հաջի-շէնում։

—Գնացել էի զուփերնաթի մօտ, ասաց նա մի առանձին կերպով։  
 —Ի՞նչ գործ ունէիր զուփերնաթի հետ։  
 —Ղազախները մեր արտերը ուտացնում են։  
 —Ցետոյ զուփերնաթը լսեց քո գանգատը։  
 —Ինձ չը թողեցին նրա մօտ։  
 —Քեզ բնչ ասեցին։  
 —Ոչինչ։  
 —Հիմայ ուր ես գնում։  
 —Գնում եմ մեր տունը։  
 —Քեզ բնչու չը թողեցին զուփերնաթի մօտ։  
 Նա լրեց։

Բարձրանալով լեռան բարձրաւանդակի վրտյ, ես տեսալ նոյն կազակների վրանները, որոնք իրանց ձիաներով տրորում էին գիւղացու արտերը և որոնց վրայ գանգատուելու էր գնացել նա։

Երեկոյեան, դեռ արևը մայր չը մտած, ես հասալ Ազատ գիւղը։ Ալստեղ իջևանեցի մի երիտասարդ քահանայի մօտ, որ Գանձակից եկել էր ամարանոց։ Արևը մայր մտաւ, բայց դեռ բաւական լոյս էր, որովհետեւ լուսնկալ գիշեր էր։

Գիւղացիները ցերեկուալ աշխատութիւնից դադարելով, հաւաքուել էին խրճիթների կտուրների վրա և բըրբուզ նստած խօսում էին միմեանց հետ։ Նո իմ հիւրընկալի հետ մօտեցանք մէկ խումբի։ Խօսակցութիւնը դարձեալ կազակների վրա էր, որոնք գիւղացիների խոտի գէզերը և հունձքը ուտեցնում են իրանց ձիաներին և ալլն։

Մի քանի ըռպէ լսելուց լետոյ ես այն եղբակացութեանը հասալ, որ կազակները խսկապէս մեղաւոր չեն։ Նրանց տուել են իջևաննելու համար մի տեղ, որ ծած-

կուած է անտառով, իսկ մնացած բոլոր հողերը մշակուած են. Յայտնի բան է խիտ անտառում անկարելի է ձիաներ արածացնել, նրանք իրանց ձիաները քաղցած չը պահելու համար, ստիպուած են արածացնել մշակուած դաշտերի վրայ:

Գիւղացիների խօսակցութիւնից երևաց և մի ուրիշ բան. Յիշեալ կազակների իջևանելու համար տեղալին եշխանութիւնից նշանակուած է եղել մի այլ ամարանոց, ուր ընդարձակ արօտամարգեր կալին նրանց ձիաների համար. Յետոյ զանազան անձինք ալդ տեղերը պահել են իրանց ձիաների համար խոտ հնձել տալու, իսկ կազակներին քշել են այնտեղ, որ արածացնեն գիւղացիների հունձքի արտերը: Ալժմ ես հասկացայ, թէ ինչո՞ւ իմ առաջնորդին չէր լաջողել իւր արտերն ազատել:

Ազատ գիւղում ես մնացի երկու ամբողջ օր, որովհետև ալդ գիւղի մերձակայքում մի քանի նշանաւոր տեղեր կալին, պէտք էր տեսնել:

Ազատ գիւղում պատահեց ինձ ծանօթանալ Կովկասեան ուսումնական շրջանի տեսչի օգնականի հետ: Նա մի հայ երիտասարդ էր, որ իր ընտանիքով եկել էր ալդ գիւղը ամառը անցկացնելու համար: Որպէս Կովկասեան ուսումնական շրջանի տեսչի օգնական, նըրան լանձնուած էր աշխատել թէ Ելիսաւէտօպօլիս, թէ Նուխուայ և թէ Ղարաբաղի կողմերի հայաբնակ գիւղերում ուսուաց գպրոցներ բաց անել: Որովհետև այդ գպրոցները վերջին ժամանակներում բաւական աղմուկներ բարձրացրին, ես հետաքրքրուեցալ տեղեկանալ պատճառները:

Յետոյ առայ ինձ հետ, որպէս ուղեցոյց, գիւղացիներից մէկին, իսկ որպէս առաջնորդ Սարգիս Զալալեանցի ճանապարհորդութեան երկու հատորները: Նուտով

յալտնուեցաւ, որ ալդ գրքերը մի և նոյն տեսակ բաներ էին, որպէս Թիֆլիսի շտաբի պատրաստած քարտէսները, միայն տարբերութիւնը նրանումն էր, որ քարտէսների մէջ բոլոր տեղերի անունները թուրքացնում են, բայց ճիշտ իրանց տեղումն են դնում, իսկ Զալալեանը տեղերի անունները հայացնում է և ցանկացած տեղումն է դնում: Երևում է, լուսահոգին շատ տեղեր աչքով չի տեսել, գրել է ուրիշներից հարցնելով. թէև անգաղար կրկնում է, թէ հայրենեաց սուրբ հոգը համբուրելով, արտասուք թափելով, անցալ ալստեղ, այնտեղ և ալլն:

Զիով գնալ շատ դժուարին էր լեռների ելեէջների վրայ, ես վճռեցի այնօր ոտքով ճանապարհորդել:

Ես կամենում էի տեսնել Գէօգգէօլ (կանաչ լիճ) կոչուած փոքրիկ լիճը: Ալդ լիճը կազմուել է Քեափազ սարի փլատակներից: Մինչև ալսօր ժողովրդի լիշողութեան մէջ մնացել է գարեւոր աւանդութիւնը, թէ ինչպէս երկրաշարժից լիշեալ սարի մի մասը քանդուեցաւ և թափուելով ձորի մէջ, կտրեց գետի (?) ընթացքը, որ նոյն ձորով հոսում էր: Զուրը հաւաքուելով լճացաւ, բայց գարձեալ ահագին ժայռերի տակից նա բունում է և շարունակում է իր ընթացքը:

Քեափազ սարի փլատակները, դիզելով ահագին քարաժայռեր միմեանց վրայ, կազմել են բազմաթիւ խոռոչներ և այրեր, որոնք մեծ ծառալութիւն են արել բնակիչներին երկրի խորվեալ ժամանակներում: Ալդ ալրերի մէջ պատսպարւում էր հայ ժողովուրդը լեզգիների, պարսիկների և օսմանցիների արշաւանքների ժամանակի: Այն տեղը, ուր գտնւում է Քեափազ լեռան քարակարկառը, կոչւում է Զինգիլ, ալսինքն չանկլ, որ նշանակում է անկարգ կերպով դիզուած քարեր: Զը նայելով, որ Քեափազ սարի մի մասը քանդուել է, բայց

նա դարձեալ բարձրաբերձ հանդիսանում է իր շրջակալ լեռների մէջ։ Անտառներից մերկ է նա։

Վերադառնալով Քեափազ սարից, ես կրկին եկայ Ազատ գիւղը, ուր իջևանել էի։ Ալդ գիւղը գտնւում է լեռան բարձրաւանդակի վրայ, նրա դէպի արևմտեան(?) կողմը բարձրանում է Սարի-եալ կոչուած սարը, որի գագաթի վրայ կայ մի հայոց մատուռ, որի մէջն է ս. Պանդալեօն բժշկի գերեզմանը։ Նոյն լեռան արևելքան կողմը, մի ձորի մէջ գտնւում է հայոց վանք, որի մէջն է Հերմոգինէ քահանալի գերեզմանը։

Ազատ գիւղում երկու օր մնալով, իմ հիւրընկալ քահանայի հետ ձի վարձեցինք, և երրորդ աւուր առաւօտեան պահուն սկսեցինք գիմել դէպի Գետաշշէն գիւղը։ Ճանապարհը ձգւում էր լեռների բարձրաւանդակների վրալով, երբեմն իջնում էր խորին ձորերի մէջ։ Կէս օր էր, երբ հասանք Գետաշշէն հայրնակ գիւղը։

Գետաշշէնը գտնւում է մի գեղեցիկ ձորի մէջ, որ տեղից անցնում է Քիւրակ-շայի ճիւղերից մէկը։ Ամբողջ ձորը, գետի աջ և ձախ կողմերում, լցուած է գիւղացիների ալգիներով, որ նրան անտառի ձև են տալիս։ Վալրենի ընկուղենիները դարեւոր հասակ ունին։

Ալդ գիւղում ես իջևանեցի Մելիք Մնացականովների տանը։ մի հոլակապ, քարից շինուած տուն, որ որոշում էր միւսներից իր մեծութեամբ։ Դա Գանձակի գաւառի չորս մէլիքներից մէկի տունն էր։ Ես գտալ ալդ տոհմի ներկայացուցիչներից մէկին՝ Մնացական բէկին անկողնի մէջ։ Մօտ հարիւրամեայ ծերունին տկար էր, բայց լիշողութիւնը տակաւին արթուն և դատաղութիւնը առողջ։ Խիստ հետաքրքրական էր խօսել ալդ կենդանի հնութեան հետ հին անցքերի

մասին։ Նա պատմում էր բոլորը ինչպէս մի Խորենացի։ Երբ նա նկատեց, որ ասածները նշանակում եմ լիշտակարանիս մէջ, շատ ուրախացաւ։ «Դրեցէք, որդի, ասաց նա, թող հայոց նախնեաց գործքերը չը կորչեն։ Նրանք շատ երևելի մարդիկ են եղելու։ Յետով նա հարցրեց։ «Հիմա Բնչպէս է հայոց ազգի գործը։ Ես պատմեցի նրան մի քանի բաներ Բերլինի դաշնագրի 61-րդ լոգուածից, Ներսէս պատրիարքի աշխատութիւններից և այլն։ «Ի՞ս մեր կաթողիկոսը Բնչ է շինում, հարցրեց նա։ — Ոչինչ, պատասխանեցի ես։ Ծերունին խորին կերպով հոգւոց հանեց և լոեց։

Գետաշէն գիւղը ունի մի քարաշէն եկեղեցի և մի մատուռ, որ ուխտատեղի է։ Նա կոչում է ս. Նշան։ Եկեղեցին ես չը գնացի։ Ինձ հետաքրքրում էր ուխտատեղին, որտեղ ես կամենում էի տեսնել մի հին գրչագիր աւետարան։

Երկար որոնելուց լետով գտան քահանալին, որ եկաւ մատուռի գուռը բաց արաւ։ Ճանապարհին իմ ուղեկից տէր Գ. Բ. պատմեց մի նոր պատահած<sup>1)</sup> անցք,

1) Մի գանձակեցի պարոն զանազան երկրներում վատնած լինելով իր առողջութիւնը, բժշկներից յուսահատուելով, վերադառնում էր իր հայրենիքը, սկսում է մանդալ հայոց ուխտատեղիների գոները, որ բժշկութիւն գտնէ։ Գալով սյդ մատուրը, քահանային պաշտամունք է կատարել տալիս, ինքն էլ մի նարեկ ձեռքին բռնած, առանձնանում է մի անկիւնում, սկսում է լուռ կարդալ։ Ուխտաւորի վարմունքը անհաճոյ է թւում քահանային, որ նա համարձակւում է իր ներկայութեամբ կարդալ, նրան պատժելու համար, կամ նոյն իսկ մոլեւանդութիւնից դրդուած, թէ աշխարհական մարդուն ներելի չէ գիւղ կարդալ եկեղեցում, — քահանան դուրս է վաղում՝ մատուրից, սկսում է աղաղակել։ Կտա ֆարմասօն է, դա ֆարմասօն է։ Գիւղացիք թափ-

որից ես հասկացալ, թէ ինչպէս պէտք էր վարուել ալդ մատուռի մէջ։ Ամենայն երկիւղաձութեամբ մօտեցալ, երեսս խաչակնքելով համբուրեցի ս. Աւետարանը և այլ սրբութիւնները, որ կարգով շարած էին սեղանի վրա։ Յետոյ խնդրեցի քահանալին, եթէ կարելի էր, ինձ ցոյց տալ գըշագիր աւետարանը։ Որովհետև մատուռի մէջ սաստիկ մութն էր, նա ալնքան բարի եղաւ, որ թոյլ տուեց աւետարանը մատուռից դուրս հանել և բակումը նալել։

Ես տեսել եմ հայոց բազմաթիւ գըշագրներ, բայց առաջին անգամ պատահում էր ինձ տեսնել մի ալսպիսի գեղեցիկ աշխատութիւն։ Մագաղաթի նրբութիւնը, գրչի գեղեցկութիւնն ու կանոնաւորութիւնը սքանչելի էր։ Համարեա ամեն երեսների վրալ կալին հիանալի պատկերներ, որ ներկալացնում էին աւետարանի իւրաքանչիւր գլխի բովանդակութիւնը։ Պատկերների նկարները, գոյները, ոսկեզօծութիւնը, ցոյց էին տալիս ժամանակի գեղարուեստի կատարելութիւնը։ Կազմը ամբողջապէս արծաթից էր. կազմի վրալ դուրս էին փորուած առաքեալների և այլ սրբերի պատկերներ։

Բայց ես բախտաւոր գտնուեցայ, որ նոյն աւետարանի վերջին թերթերի վրալ գտայ մի լիշտակարան, որ ինձ համար շատ թանգագին էր։ Իմ ճանապարհորդութեան գլխաւոր նպատակներից մէկը լինելով հայոց հին մէլիքների մասին պատմական տեղեկութիւններ հաւաքել, — ալդ աւետարանի մէջ գտայ Զրաբերդի մէլիք-

ւում են և լաւ ջարդում են «Փարմասօնին»։ Խեղճ մարդը փոխանակ բժշկութիւն գտնելու, ունեցած առողջութիւնն էլ կորցնում է այստեղ։ Նա գանգատուել է հոգ. իշխանութեանը, յայտնի չէ պատմուեց արդեօք անպիտան քահանան։

ների ամբողջ տոհմագրութիւնը<sup>1)</sup>: Ահա ինչ դիպուածքով, Ցիշատակարանից երևում է, որ 1753 թ. Զարաբերդի մահալի իշխան մէլիք Հաթամը յետ է գնել այդ աւետարանը պարսիկներից, որ ինրանց ձեռքում գերի էր ընկած: Նրա առաջին արծաթակազմը պարսիկները պոկած են եղել, մէլիքը նորից արծաթով կազմել է տալիս և ընծալում է Գետաշէնի եկեղեցուն: Որպէս զի ապագայ սերունդը այդ բարեգործութեան համար լիշէ նրան իր աղօթքների մէջ, մէլիքը ժամանակի սովորութեան համեմատ, ի հարկէ կրօնական մտքով, արձանագրում է լիշատակարանի մէջ իր նախնեաց, իր որդիների և թոռների անունները: — Ահա ալդքանը մի հաստատ փաստ է պատմագրի համար, գիտենալ թէ որ ժամանակումն էին ապրում այդ մարդիկը, ովքեր էին նրանց նախնիքը, ովքեր էին նրանց որդիքը, թոռները և ալլն: Բացի գրանից, յիշատակարանի մէջ արձանագրուում է, թէ ով էր ժամանակի կաթողիկոսը, առաջնորդը, երկրի տիրապետողը և ալլն:

Մեր հին ձեռագրների մէջ գտնուած լիշատակարանները, համարեա բոլորը այդ ձեռվ են գրւում, և կարող են մատակարարել հնասէրներին առատ պատմական նիւթեր, եթէ հաւաքուէին: Գոնէ էջմիածնի ծոլլ, պորտաբոյծ վարդապետները այսքանը անէին, հաւաքէին իրանց ձեռքի տակ գտնուած ահազին գրադարանի գըշագիրը գրքերի լիշատակարանները և տպել տալին իրանց տպարանում:

Ես աւելորդ եմ համարում իւրաքանչիւր գիւղի տնտեսութեան եղանակը, կեցութեան ձեւերը, գիւղացիների վիճակը առանձին-առանձին նկարագրել, դա կը

<sup>1)</sup> Զրաբերդի մէլիքութիւնը Կարաբաղի հինգ մէլիքութիւններից (Խամսայի) մէկն էր:

ձանձրացնէր իմ ընթերցողներին, և ես անդադար կը ըկ-  
նութիւնների պիտի հանդիպէի: Այդ կողմերի գիւղա-  
ցիների դրութիւնը և նրանց կենցաղավարութեան ե-  
ղանակը ալնքան նման է միմեանց, որ բոլորի մասին  
կարելի է գրել մի ընդհանուր տեսութիւն և այդ կը  
գրեմ ես յետոյ:

Գետաշէնցիների մասին այսքանը աւելորդ չեմ  
համարում լիշել, որ նրանք յալտնի են շրջակալ գիւ-  
ղացիների մէջ իրանց կուռասէր և խոռովարար ընաւո-  
րութեամբ: Երբ գիւղական աշխատութիւնները դադա-  
րում են, հանգստի ժամանակ, նրանք մի առանձին  
բաւականութիւն են զգում, հաւաքուել խրճիթների  
կտուրների վրայ, ծխել և միմեանց ուշունցներ տալ:  
Երևանի նահանգի աշտարակցիները հայհոյանքը, ու-  
շունցը իր կատարելութեանն են հասցըել, բայց գետա-  
շէնցու ուշունցը, թէև սիւնեցու նման կոշտ է, կո-  
պիտ է, բայց ազդու է:

Գետաշէնից անցանք կարաբուլաղ գիւղը, որ ընդ-  
ամենը 2 ժամուալ (?) ճանապարհ է: Ամեն մի գիւղ  
հասնելիս կամ պէտք է որոնել տանուտէրի տունը,  
կամ քահանալի տունը: Ես ընտրեցի վերջինը, մտածե-  
լով, թէ հուձքի, կալի ժամանակ է, տանուտէրը զբա-  
ղուած կը լինի, բայց քահանան անգործ կը լինի: Բայց  
իմ կարծիքը խարեց ինձ: Քահանալին մենք գտանք  
մի քարաշէն քարվանսարալի մէջ: Այդ քարվանսարան  
մնացել է ամենահին ժամանակներից, նրա շրջապա-  
րիսպը, դարվագան, ախոռատները քանդուած են, և  
գիւղացիները քարերը տանելով գործ են ածել իրանց  
շինութիւնների համար: Ալժմ ողջ մնացել են մի կարգ  
քարաշէն և կամարակապ սենեակներ, որ առաջ ծա-  
ռալում էին որպէս իջևան ճանապարհորդների համար<sup>1)</sup>:

<sup>1)</sup> Երևում է, որ հին ժամանակներում Գանձակից

Քարվանսարան ալժմ բոլորովին անտէր մնալով, գիւղի տէր Դ. քահանան սենեակներից մէկը ընտրել էր իր համար որպէս արհեստանոյ, այնտեղ տակառներ էր շինում, որոնք մեծ քանակութեամբ գնում են շըր-ջակայ գիւղացիները։ Քահանան վարպետի մօտ չէ սովորել, այլ իր սեպհական վարժութիւններով, փալտից ալնպիսի իրեղէններ է շինում, որ ամենահմուտ արհեստաւորի գործ կարելի է համարել։ Ես տեսալ նրա շինած մի փալտեայ մատուցարան (պօդնօս) որը իր նըրբութեամբ և գեղեցկութեամբ շատ հիանալի էր<sup>1)</sup>։ Քահանան բացի հիւսնութիւնից գիտէր և ալգեգործութիւն։ Անտառներից վալրենի պտղատու ծառեր բերելով, տնկել էր մի ալգի և տունկերը պատուաստելով, այն աստիճան ազնուացը էր, որ ամենաընտիր տեսակների հետ կարելի է համեմատել։

Առ հասարակ ալդ քահանան ինձ վրայ շատ լաւ տպաւորութիւն գործեց, ես առաջին անգամ տեսնում էի Աստուծոյ սեղանի պաշտօնեաններից մէկին, որ իր ապրուստի լոյսը չէր դրել միայն պսակից, մկրտութիւնից և թաղումից ստացած փողերի վրայ, այլ ապրում

Նախիջւան և երևան տանող Ճանապարհը պյոտ ձորի միջովն է եղել։ Այստեղից մինչև Սևանայ լիճը և պյոնտեղից Դարալագեազի (Վայոց ձորի) միջով մինչև Նախիջւան և երևան, երևում են այս տեսակ քարվանսարանների հետքեր, որ ծառայում էին որպէս իջևաններ քարաւանների անցուգարձի համար։

1) Պատմում են որ յիշեալ քահանան իր շինած փայտեայ մատուցարաններից երկու հատ ընծայ տարաւ էջմիածին հայոց կաթուղիկոսին, և այնտեղ փոխանակ վարձարուելու յանդիմանութիւն ստացաւ։ Ես կարծում եմ եթէ մի քանի հարիւր բուրդի տարած լինէր Մանուն, մի ևսչ կստանար ու պատուվի յետ կդառնար։

Էր արդար արհեստով և գիւղալին տնտեսութեամբ։ Նրա արհեստանոցի մօտ էր կալը, որտեղ նա կալսել էր տալիս իր մշակութեան բերքը։

Քահանալի արհեստանոցում ես գտալ մի ուրիշ զարմանալի մարդ։ Դրան կարելի է իր կեանքում պատահած արկածների համար և տեսած երկրների համար հայոց թափառական հրէալ կոչել։ Նա եղել է Թուրքիայում, Պարսկածանում, Եգիպտոսում, Հնդկաստանում, Զինաստանում, մի խօքով, ամեն տեղ։ Հնդկաստանում նա սովորել էր լեղակ մշակելու արհեստը, Կամենալով այդ արհեստը իր հայրենիքում ևս մտցնել, նա վերադառնալով Գանձակ, սկսեց փորձեր անել, փորձը լաջողուեցաւ և իր արդիւնաբերած լեղակը նա ցոյց տուեց տեղալին կառավարութեանը, խնդրելով, որ իրան օգնեն, որ կանոնաւոր մշակութիւն սկսէ։ Ոչ ոք նրա վրայ ուշադրութիւն չդարձեց, ալժմ ծերութիւնից և աղքատութիւնից ստիպուած, նա պատսպարան էր գտել Կարա-Բուլաղի հին քարվանսարալի աւերակների մէջ, և տէր հօր արհեստանոցում նստած, կօշիկներ էր կարում, կօշիկների կաղապարներ էր շինում և օգնում էր տէրաէրին նրա հիւմնութեան գործում։

Կարա-Բուլաղի եկեղեցին մտնելուց յետոյ և մի քանի գըքերի լիշտակարանները քննելուց յետոյ, ես պատրաստուեցալ շարունակել իմ ճանապարհը։ Այստեղ ես պիտի բաժանուէի տէր Գ. Բ. եանցի հետ, որը Ա-զատ գիւղից բերել էր ինձ մինչև Կարա-Բուլաղ։

Մի թուրքեց ձի վարձելով, ճանապարհ ընկալու տէրը եկաւ ինձ հետ ճանապարհը ցոյց տալու համար։ Հարց ու փորձով հասկացալ, որ իմ առաջնորդը թուրքերի մի թափառական ցեղին էր պատկանում, և մեծ անզգուշութիւն էր իմ կողմից մի ալսպիսի աւազակի հետ, միայնակ, լեռների վրայ ճանապարհոր-

զել։ Նա փիագալ էր, ասացի, որ առաջ գնալ, իսկ ես ձիով կը հետևեմ նրան։ Այդ այն նպատակով էր, եթէ թուրքը ինձ կողոպտելու փորձ անէ, ես կարողանամ շուտով նկատել և պաշտպանուելու միջոց ունենամ։ Իմ ետևից գալով, նա կարող էր մի ատրճանակի հարուածքով ինձ ցած գլորել, յետոյ կողոպտել։ Բարեբախտաբար ոչինչ չը պատահեց և ես Թօդան<sup>1)</sup> թուրքաբնակ գիւղից անցնելով, անվտանգ հասալ հայոց էրքէջ գիւղը, որ գտնւում է Բալայ-քիւրակ գետակի մօտ։

Չը կամենալով էրքէջում երկար մնալ, շուտով կանչել տուի գիւղի քահանալին, որ եկեղեցու դուռը բաց անէ։ Քահանան յալտնուեցաւ. զա Կարա-Բուլաղի արհեստաւոր քահանալի հակապատկերն էր։ Նա յօժարութեամբ բաց արաւ եկեղեցու գաները, կարծելով, թէ ես ուխտաւոր եմ և շուտով աւետարանը և մի կոտրած խաչ դրեց սեղանի վրալ, որ ես համբուրեմ և նրան փող տամ։ Բայց երբ նկատեց, որ ես լիշտատերը գուրս հանեցի ծոցիցս և սկսեցի մատիտով մի քանի նկատողութիւններ անել նրա վրալ, քահանան սարսափեց, կարծելով, թէ ես մի պաշտօնական անձն եմ և սատանան գիտէ, ինչ նպատակով եկել եմ նրա եկեղեցին «գրելու»։ Իմ բալոր ջանքը, համոզելու նրան, որ նա ալսպիսի կասկածներ չունենալ, ի զուր անցաւ։ Նա ոչինչ չը կամեցաւ ինձ ցոլց տալ։ Մտածելով, որ կարող է մի անախորժութիւն պատահել, ես թողեցի ու գուրս եկալ եկեղեցուց, բայց ամենսին չը մեղադրելով ողորմելի քահանալին։

1) Թօդանը նոյնպէս հայաբնակ գիւղ է եղել, ոյժմ թուրքերի ձմերոց է։ Հայոց եկեղեցին կիսով չափ աւերակ, գեռ մոռւմ է։

Երքեղից դուրս գալով, շարունակեցի իմ ճանապարհը, դէպի կարաչինար, կամ Աղջա-ղալալ (սպիտակ ըերդ): Դէպի ձախ կողմի լեռները, որ շարունակութիւն են Մռաւ (?) լեռան, պատաժ էին անտառներով, իսկ դէպի ձախ բարձրաւանդակները փոքր առ փոքր իջնում են լեռները, աւելի տափարակ ձև են ստանում, անտառներ չը կան, միայն պատաժ են ճոխ խոտաբուժերով և մշակած արտերով։ Երեկոյեան ես հասալ Ղարաչինար Մէլիք Բէգլարովների տունը։

Ռ Ա Ֆ Ֆ Ի

(Շարունակութիւնը միւս գոգում)

